Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

19-20 (309-310)
26. 06. 2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Լусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

ՀՈՒԼԻՍ 19-Ը ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՆ Է

ՎԻՏԱԼԻ ՄԻԽԱՅԻԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ



Վիտալի Միխայիլի Բալասանյանը ծնվել է 1959թ. մարտի 5-ին, Լեռնային Ղարաբաղի Ասկերան ավանում:

1976թ. ավարտել է Ասկերանի միջնակարգ դպրոցը, 1990թ.՝ Երեւանի կոոպերատիվ առեւտրի տեխնիկումը, 2011թ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հեռակա բաժինը՝ տնտեսագետի մասնագիտությամբ:

1977-1979թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1976-1990թթ. աշխատել է Ասկերանի շրջանի հասարակական սննդի հիմնարկձեռնարկությունում՝ որպես տաղավարի վարիչ, արտադրության պետ-փոխտնօրեն:

1990թ. ընտրվել է Ասկերանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար:

1992թ. օգոստոսին նշանակվել է ԼՂՀ ՊԲ Ասկերանի պաշտպանական շրջանի հրամանատար, 1996-1998թթ.՝ հանդիսացել զորամիավորման հրամանատար, 1998-1999թթ.՝ ԼՂՀ ՊԲ հրամանատարի տեղակալ, 1999թ. սեպտեմբերից՝ ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ:

2000թ. մարտին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

2000-2005թթ. եղել է «Արցախի պատերազմի վետերանների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

1991թ. ընտրվել է ԼՂՀ 1-ին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

2005թ. խորհրդարանական ընտրություններում ընտրվել է ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Հանդիսացել է Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: Պատգամավորական գործունեությունն իրականացրել է «ՀՅԴ-Շարժում-88» խմբի կազմում:

2007-2010թթ. ԼՂՀ նախագահի խորհրդականն էր:

2010թ. մայիսի 23-ի խորհրդարանական ընտրություններում ընտրվել է ԼՂՀ 5-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի եւ «Դաշնակցություն» խմբակցության անդամ է:

2011 թվականից «Հավատք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է:

Պարգեւատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, ՀՀ մի շարք շքանշաններով եւ մեդալներով, իսկ 2002թ. սեպտեմբերին արժանացել է ԼՂՀ բարձրագույն՝ «Արցախի հերոս» կոչմանը՝ պարգեւատրվելով «Ոսկե արծիվ» շքանշանով:

Անկուսակցական է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ, չորս թոռ:

ՎԱԼԵՐԻ ՍԵՐԳԵՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1947թ. հունվարին, Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղում, ծառայողի ընտանիքում:

1964թ. ավարտել է Վանք գյուղի միջնակարգ դպրոցը:

1965թ. ընդունվել և 1971թ. ավարտել է Ադրբեջանի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժինը:

1965-1967թթ. աշխատել է Բաքվի շինմոնտաժային վարչությունում՝ որպես բանվոր:

1968-1969թթ. աշխատել է Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի ութամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1969-1973թթ. աշխատել է Գառնաքար գյուղի ութամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1973-1974թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում:

1974-1975թթ. աշխատել է Գառնաքար գյուղի ութամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1975-1977թթ. աշխատել է Մ. Գորկու անվան մարզային գրադարանում՝ որպես մեթոդիստ:

1977-1979թթ. աշխատել է Ասկերանի շրջանի գրադարանների կենտրոնացված համակարգում՝ որպես տնօրեն:

1979-1992թթ. աշխատել է որպես Ասկերանի շրջանի մշակույթի բաժնի վարիչ:

1980թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը:

Երկու անգամ ընտրվել է Ասկերանի շրջխորհրդի պատգամավոր:

1992-1993թթ. աշխատել է որպես Շուշիի շրջվարչակազմի մշակույթի բաժնի վարիչ, այնուհետև՝ վարչակազմի քարտուղարության պետ:

1993-1995թթ. աշխատել է Շուշիի կոնդենսատորների գործարանում՝ որպես փոխտնօրեն:

1995թ. Շուշիի թիվ 13 ընտրատարածքից ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր:

1995-2000թթ. ԼՂՀ ԱԺ պաշտպանության և օրինականության մշտական հանձնաժողովի անդամ է:

1997-2012թթ. փետրվարի 1-ը աշխատել է ԼՂՀ Ազգային ժողովի աշխատակազմում՝ որպես ընդհանուր բաժնի վարիչ:

2007թ. «Քաղաքացիական հասարակություն» ՀԿ նախագահն է:

Ամուսնացած է, ունի 3 զավակ:

ԲԱԿՈ ՍԱՀԱԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Բակո Սահակի Սահակյանը ծնվել է 1960թ. օգոստոսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում:

1977թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1978-1980թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում:

1981թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի թիվ 9 արտադրական մեքենայացված կոմբինատում՝ որպես փականագործ-մեխանիկ: Աշխատել է Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատում՝ որպես քարջարդ բանվոր:

1983-1987թթ. աշխատել է հնությունների վերականգնման գիտական վարչության Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես վարպետ-ռեստավրատոր:

1987-1990թթ. մատակարարման մարզային վարչության աշխատակից էր:

1988-ից Ղարաբաղյան շարժման առաջամարտիկներից է:

1990թ. մտել է Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի շարքերը:

1992-1993թթ. ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի պետի տեղակալն էր:

1993-1995թթ.՝ ԼՂՀ պաշտպանության բանակի թիկունքի շտաբի պետը:

1995-1996թթ. ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարի արտաքին կապերի գծով տեղակալն էր:

1996-1997թթ.՝ ԼՂՀ պաշտպանության բանակի 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալը:

1997-1999թթ. ՀՀ ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարի օգնականն էր:

1999-2001թթ.՝ ԼՂՀ ներքին գործերի նախարար:

2001-2007թթ.՝ ԼՂՀ ազգային անվտանգության պետվարչության պետ, ԼՂՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն: Զինվորական կոչումը՝ գեներալ-մայոր:

2007թ. հուլիսի 19-ին կայացած նախագահական ընտրություններում ընտրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ: 2007թ. սեպտեմբերի 7-ին ստանձնել է ԼՂՀ Նախագահի պաշտոնը:

Պարգեւատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, ՌԴ «Պետրոս Մեծ» 1-ին աստիճանի շքանշանով, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի եւ «Վազգեն Սարգսյան» մեդալներով, ինչպես նաեւ այլ պարգեւներով:

Ավարտել է Արցախի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

Հանդիսանում է ՌԴ անվտանգության, պաշտպանության եւ օրինապահպանության հարցերով ակադեմիայի իսկական անդամ:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

ԱՐԿԱԴԻ ԻՎԱՆԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ծնվել է 1962 թվականի սեպտեմբերի 24-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ղզղալա (Բերդաշեն) գյուղում, ծառայողի ընտանիքում:

1985թ. ավարտել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը. անվանական՝ Լենինյան կրթաթոշակառու էր:

1986-1990թթ. սովորել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի ասպիրանտուրայում՝ «Պինդ մարմնի ֆիզիկա» մասնագիտությամբ:

1985-1991թթ. աշխատել է Բերդաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ:

1985-1986թթ. համատեղությամբ դասախոսել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր տեխնիկական առարկաների ամբիոնում:

1991թ. դոկտորական խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հեղինակ է տասնյակ գիտական թեզիսների և հոդվածների, որոնք վերաբերում են դիֆրակցված ռենտգենյան ճառագայթման պարամետրերի կարգավորման հիմնախնդիրներին:

1992թ. աշխատանքի է անցել Հայկական պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում, այնուհետև՝ ԼՂ պետական համալսարանի ֆիզիկայի ամբիոնում՝ որպես ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ:

1992-1995թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում: 1993թ. սեպտեմբերին նշանակվել է ԼՂՀ ՊԲ ՀՕՊ զորքերի վարչության առաջին շտաբի պետ:

1995-2000թթ. եղել է ԼՂՀ երկրորդ գումարման Գերագույն խորհրդի (Ազգային ժողովի) պատգամավոր, սոցիալական ոլորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

1999թ. ապրիլի 30-ին ընտրվել է Արցախի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ԱՍԴԿ) նախագահ: 2005թ. հունվարին հայտարարվել է ԱՍԴԿ-ԱԺԿ (Արցախի ժողովրդավարական կուսակցություն) միաձուլման մասին:

2000-2005թթ. եղել է ԼՂՀ 3-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր՝ սոցիալական ոլորտի մշտական հանձնաժողովի անդամ:

2001թ. որպես դոցենտ աշխատել է ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնում:

2002թ. հոկտեմբերի 30-ին ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի առաջին նախագահ՝ համատեղությամբ դասավանդելով Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) մաթեմատիկայի ամբիոնում՝ մինչև 2004 թվականը:

2005թ. հոկտեմբերի 19-ին ազատվել է ԼՂՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնից՝ լիազորությունների ավարտման կապակցությամբ:

2005թ. հունվարին ԱԺԿ հիմնադիր համագումարում ընտրվել և 2008թ. մայիսին ԱԺԿ երկրորդ համագումարում վերընտրվել է կուսակցության կենտրոնական խորհրդի անդամ:

2005-2008թթ. եղել է ԱԺԿ գրասենյակի ղեկավար:

2008թ. մայիսի 7-ին ընտրվել է ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր՝ համամասնական համակարգով՝ Արցախի ժողովրդավարական կուսակցության ընտրացուցակով, նույն թվականի հունիսից՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

2008-2010թթ. եղել է ԼՂՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ:

2010թ. հունիսի 10-ին ավարտվել են նրա պատգամավորական լիազորությունները:

2011թ. հոկտեմբերի 6-ից մինչ այժմ աշխատում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես ուսումնագիտական աշխատանքների գծով փոխտնօրեն:

Ներկայում աշխատում է դոկտորական ատենախոսության վրա:

Այժմ անկուսակցական է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

ՕՐԱԳԻՐ

ԵՐԴՎԵՑԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ ՄԱՇՏՈՑԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ

Արցախ աշխարհում Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած հայկական առաջին դպրոցն Ամարասում իր ավելի քան 1600-ամյա պատմության մեջ քանի անգամ է վեր հառնել՝ ստույգ կասեն պատմաբանները: Բայց ամենավերջին՝ թարմ դեպքի մասին կվկայենք մենք, երբ ս. թ. հունիսի 9-ին Արցախի պետական համալսարանի հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի շրջանավարտներն Ամարասում, սուրբ Մաշտոցի աներևույթ ներկայությամբ և նրա օծմամբ ուսուցչի, գրչի ու գիտության մշակի ուղեգիր ստացան հանդիսավոր պայմաններում: Հիշարժան այդ իրադարձությանը ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը, փոխնախարար Սլավա Ասրյանը, ԱրՊՀ ղեկավարությունը: Աննախադեպ այդ միջոցառման մտահղացումը, որի հեղինակը ֆակուլտետի դեկան Հովիկ Մուսայելյանն էր, ջերմ արձագանք է գտել ռեկտորի կողմից:

Ամարասի վանական համալիրն այդ օրը սոսկ զբոսաշրջության կենտրոն չէր, ուր, ի դեպ, եկել էին հյուրեր մայր Հայաստանից և արտասահմանից: Մեր առաջին դպրանոցն այդ օրն իր իսկական կոչման վրա էր: Նորավարտ մանկավարժները, լրագրողները, ապագա գիտնականներն իրենց առաքելությանն անցնելուց առաջ եկել էին քայլելու մեր առաջին ուսուցչի ոտնահետքերով, Ուսուցչապետի աներևույթ աջը համբուրելու, ու ինչպես նրա մեծ աշակերտներ Կորյունը և մյուս երևելիներն են արել, ծնրադիր երդվելու հավատարիմ մնալ նրա պատգամներին՝ հայ լեզուն և խոսքը ուսուցանել մեր մատաղ սերնդին, պայքարել նրա անաղարտության համար, նվաճել գիտության բարձունքները:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վ. Խաչատրյանը ողջունեց գաղափարը՝ խոստովանելով, որ որպես նախարար, առաջին անգամ է տեսնում, որ շրջանավարտները երդում են տալիս Ամարասում՝ Մեսրոպյան դպրանոցի բակում՝ իբրև Սուրբ Մեսրոպի գործի շարունակողներ: Եվ պահի ու վայրի ազդեցությունը նրան բնականորեն մղեց հետ գնալ մինչև այն ժամանակները, երբ երանելի Մեսրոպ Մաշտոցը Հայոց Արևելից կողմանց առաջին կրթօջախն Արցախում բացեց Ամարասում, վառեց կրթության ու գիտության ջահը ու հանձնեց արցախցուն: Իսկ արցախցին պատվով ու փառքով ընդունեց, պատվով պահեց ու պահպանեց և փառքով փոխանցեց սերնդեսերունդ՝ մինչև այսօր մեզ: «Եվ մենք այս պահին պարտավոր ենք գիտակցել, որ այն պահել-պահպանելու կարիքն ունի: Պիտի պահենք անաղարտ ու փոխանցենք մեզնից հետո եկող սերնդին: Ահա խորհուրդը այսօրվա: Իսկ երդում տալը, այն էլ կրկնակի, ուղղակի անհրաժեշտ է արցախցուն:

Արցախցին, անկախ նրանից՝ տղա է, թե աղջիկ, երկու անգամ պետք է երդում տա: Առաջինը՝ սրբությամբ ծառայել հայրենիքին՝ բոլորս միասին պետք է դառնանք մեր բանակի մոդուլը, իսկ երկրորդ երդումը՝ ձեռք բերած մասնագիտությունը ծառայեցնել սեփական ժողովրդին»,- ասաց նախարարը: Ներկաները շրջանավարտների շուրթերից լսեցին այդ երկրորդ երդումը՝ իրենց մասնագիտությունը ծառայեցնելու մեր ժողովրդին, մի մասը՝ որպես ուսուցիչներ մատաղ սերունդ դաստիարակելով, լրագրողները՝ իրենց գրիչն անաչառ ծառայեցնելով: Վ. Խաչատրյանը շնորհավորեց ու բարի երթ մաղթեց շրջանավարտներին՝ նրանց հանձնելով բուհական տքնաջան ուսումնառության վկայագիրը՝ դիպլոմները: Հատկանշական է, որ առաջինը դիպլոմ հանձնվեց գերազանցիկ շրջանավարտ, լրագրող Մանուշ Դանիելյանին, կարծես մեկ անգամ ևս «Ի սկզբանէ էր բանն» Աստվածաշնչյան ճշմարտությունը հավաստելով:

ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սլավա Ասրյանն իր հերթին շնորհավորելով շրջանավարտներին՝ մասնագիտական որակավորում ստանալու կապակցությամբ, նշեց դիպլոմի՝ որպես կյանքում ուղեկցող փաստաթղթի, կարևորությունը, բայց նաև ընդգծեց, որ յուրաքանչյուրն աշխատանքում պետք է դրսևորի իր կարողությունները: Նա մաղթեց, որ յուրաքանչյուրը կյանքում իր տեղը գտնի՝ առաջին հերթին մասնագիտությամբ աշխատելով, իսկ եթե չստացվի՝ ամեն դեպքում, ինչ աշխատանք էլ կատարեն, ծառայեն ժողովրդին: Մի խումբ շրջանավարտներ էլ դիպլոմներն ստացան փոխնախարարի ձեռքից, և առաջինը դարձյալ գերազանցության նմուշի դիպլոմ ստացողն էր:

Շրջանավարտներին շնորհավորելուն, բարեմաղթանքի ու դիպլոմների հանձնմանը իրենց մասն ունեցան նաև ԱրՊՀ ղեկավարները:

Ռեկտոր Ստեփան Դադայանը միջոցառումը դասեց բուհի 43-ամյա տարեգրության մեջ ամրագրված գեղեցիկ ավանդույթների շարքը: Պատահական չէ, որ նախաձեռնությունը ծնվեց հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետում: Չորս տասնամյակ առաջ, երբ հիմնադրվեց Ստեփանակերտի մանկավարժականը, նրա ակունքներում բանասիրական ֆակուլտետն էր՝ բուհում բուն դրած ազգերի հայատյաց, այսպես կոչված, դասախոսների դեմ պայքարող հայ մտավորականների դարբնոցը:

ԱրՊՀ պրոռեկտոր Վահրամ Բալայանի նկատառմամբ, Ամարասում՝ հայոց մտքի այդ օջախում ստանալով իրենց դիպլոմները, շրջանավարտները դրանով իսկ ոչ միայն առնչվում են պատմությանը, այլև դառնում են ժառանգորդը Մաշտոցի և այն բոլոր դպիրների, ովքեր ստեղծագործել են այստեղ ու դիպլոմ ստանալով, նաև դառնում են մեր պետության շինարարները:

Հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր Սոկրատ Խանյանը հավատացած է, որ նորավարտ մանկավարժներն ու լրագրողներն ավելին կանեն, քան նրանց ուսուցիչները: Իսկ միջոցառումը համարեց մտքի խիզախություն և մտահղացման թարմ երևույթ:

Հայ բանասիրության և լրագրության ամբիոնի վարիչ Անահիտ Աթայանն իրենց առաքելությանն անցնելուց առաջ շրջանավարտների՝ Մաշտոցի դպրանոց այցելելը համեմատեց հայոց այն երևելիների արարքի հետ, երբ իրենց հայանպաստ գործունեությունը սկսելուց առաջ այցելում էին Օշական՝ ծնրադրելու Մեծն Մաշտոցի գերեզմանին՝ Աստծուց խնդրելու շնորհել Մաշտոցի հանճարի թեկուզ մեկ նշույլ: Այդ միջոցառումը նա համարեց նույնպիսի մի ծնրադրություն: Նորավարտ մանկավարժները դպրոց են գնում կրթական բարեփոխումների ծանր, միաժամանակ հետաքրքիր և պատասխանատու ժամանակաշրջանում: Նա վստահ է, որ նրանք կարդարացնեն իրենց: Շրջանավարտներին ուղղված նրա խոսքը մայրական օրհնություն էր ու նաև պատգամ, որ հանկարծ չտարվեն խենթ աշխարհի նյութական գայթակղություններով, հոգու մեջ վառ պահեն ոգեղեն շունչը:

Համալսարանի գիտխորհրդի քարտուղար Արմեն Սարգսյանը արժևորեց նոր ավանդույթի սկզբնավորումը մայր բուհում:

Դեկան Հովիկ Մուսայելյանն անթաքույց հուզմունքով դիմեց շրջանավարտներին: Նա երկար էր փափագել այս միջոցառումը կյանքի կոչելու և երախտագիտության խոսք ասաց բուհի ռեկտորի և ԿԳՆ ղեկավարության հասցեին, որոնք ոչ միայն ընթացք տվեցին, այլև իրենց մասնակցությամբ ու գնահատականով կարևորեցին երևույթը: Նա անդրադարձավ ֆակուլտետի վերջին ձեռքբերումներին: Կարճ ժամանակահատվածում իրականացվել են մի շարք բարեփոխումներ՝ որակյալ մասնագիտություն ստանալու ուղղությամբ: Լրագրության բաժինն էապես բարելավվեց հեռուստատեսության բաժին բացելով, ինչը հնարավորություն է տալիս պրակտիկան առավել կայուն հիմքերի վրա դնելու: Խոսքն ուղղելով հայոց լեզու, գրականության բակալավրիատի շրջանավարտներին՝ նա ասաց, որ շատերը, հավանաբար, ուսումը կշարունակեն մագիստրատուրայում, որոնք բոլոր հիմքերն ունեն: Եվ վկայակոչեց Ստեփանակերտի հ. 10 դպրոցում անցկացրած նրանց փորձուսուցումը, որն ավարտվելուց հետո տնօրենը շնորհակալական նամակ էր ուղղել համալսարանի ղեկավարությանը՝ նշելով, որ դպրոցի պատմության մեջ նրանք թերևս առավել լուսավոր ուսանողներ էին: Դեկանը համոզմունք հայտնեց, որ ամեն քայլ կձեռնարկեն, որ շրջանավարտների հետագա ճանապարհը լինի արգասաբեր՝ ի նպաստ ԱրՊՀ-ի, Արցախի:

Իսկ մագիստրոսները, ինչպես դիպուկ ասաց դեկանը, ավարտելով՝ չպրծան համալսարանից, և դասախոսներից, նրանց մի մասը նոր ուսումնական կընդունվի ասպիրանտուրա, ոմանք իրենց գիտական գործը կշարունակեն՝ ձևակերպվելով որպես հայցորդ ու հետագայում կմնան ԱրՊՀ-ում:

Եվ ինչպես այս միջոցառումն էր աննախադեպ, առաջին դպրատան պատերի ներքո, և առաջին անգամ, բոլորի ներկայությամբ դեկանը հայտարարեց ևս մեկ աննախադեպ նախաձեռնության մասին՝ եկող ուսումնականում համալսարանում կբացվի մասնագիտական խորհուրդ՝ նորագույն շրջանի հայ գրականության, որտեղ կպաշտպանեն թեկնածուական թեզ: Դա ևս մի կարևոր քայլ կլինի տարածաշրջանում ԱրՊՀ գիտակրթական կյանքի իրականացման համար:

Սուրբ վայրում ամեն ցանկություն և բարեմաղթանք շուտ է հասնում Բարձրյալին: Բայց և տված երդումներն ու խոստումներն էլ պարտավորեցնող են...

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ԼԵՎՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կյանքից հեռացավ Արցախի մտավորականության բազմավաստակ ներկայացուցիչներից մեկը՝ Լևոն Համբարձումի Հարությունյանը, որի անունը մտել է հայ մշակույթի պատմության մեջ որպես 20-րդ դարի լավագույն մանկավարժ, գրող-բանահավաք, ազգագրագետ, բազմաթիվ ժողովածուների հեղինակ:

Լևոն Հարությունյանը ծնվել է 1928թ. Մարտունու շրջանի Աշան գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը, ապա՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: Այնուհետև երկար տարիներ նա դասավանդել է Աշանի միջնակարգ դպրոցում, ունի 45 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ: Հեղինակ է ազգագրական, բանագիտական, գեղարվեստական տասից ավելի գրքերի: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բարձր է գնահատել արժանավոր մտավորականի վաստակը՝ նրան պարգևատրելով «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Լևոն Հարությունյանն արժանացել է XX դարի լավագույն մանկավարժի և վաստակավոր ուսուցչի կոչումներին: Նա զբաղվել է նաև լրագրական գործունեությամբ՝ աշխատակցելով Արցախի և Հայաստանի պարբերական մամուլին: Որոշ ժամանակ աշխատել է Մարտունու շրջանի «Աշխատանք» թերթում:

Լևոն Հարությունյանը մեր ժամանակների այն խորագիտակ ազգագրագետներից էր, որը արժանի ձևով շարունակեց ականավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի ավանդույթները: Երևանում և Ստեփանակերտում տպագրվել են նրա մի քանի ժողովածուները՝ «Կաթնակորեկ», «Գրառումներ ծոցատետրից», «Արցախի բանահյուսության նշխարներ» և այլ խորագրերով, որոնք վառ գույներով ներկայացնում են արցախցիների սովորույթները, կենցաղը, հերոսականությունը, աշխատասիրությունը, բարությունը, սրամտությունը և հումորի զգացումը: Լևոն Հարությունյանը 1988թ. սկսած, ինչպես իր բազմաթիվ խիզախ սաները, մեր ազատության համար մղված պայքարի առաջամարտիկ էր՝ ուսուցիչ և մարտական բանաստեղծությունների հեղինակ: Նրա ամբողջ գիտակցական կյանքն անցել է արարումի և ժողովրդին անմնացորդ ծառայելու զգացումներով:

Լևոն Հարությունյանը կյանքից հեռացել է միայն ֆիզիկապես, նրա ազնիվ սիրտը և արցախյան արևով օծված հոգին ապրելու և թևավորելու է մարդկանց: Նա հսկայական աշխատանք է կատարել մատաղ սերնդին հայրենասիրական ոգով կրթելու և դաստիարակելու գործում, նրա բազմաթիվ սաներն այսօր մեր երկրի լավագույն մասնագետներից են: Լևոն Հարությունյանի՝ հրաշալի մարդու, մանկավարժի, գրող-բանահավաքի, երկրի մեծ նվիրյալի հիշատակը միշտ վառ կմնա սերունդների հիշողության մեջ:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, Արցախի գրողները, ստեղծագործական մտավորականությունը խորապես ցավակցում են Լևոն Հարությունյանի ընտանիքին և հարազատներին՝ մեծ կորստի կապակցությամբ:

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարություն
Արցախի գրողների միության վարչություն

Ընկերը՝ ընկերոջ մասին

ՆԱ ՄԵԾ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԷՐ

Մի Մարդ էլ գնաց: Մի Մարդ էլ հեռացավ աշխարհից. հանրապետությունում մեծ անուն հանած, բոլորի կողմից հարգված, ճանաչված, բազմավաստակ ուսուցիչ, բանաստեղծ, բանահավաք, ազգագրագետ, ժուռնալիստ, հրապարակախոս Լևոն Համբարձումի Հարությունյանը: Մենք բոլորս շատ բան կորցրինք, շատ տխրեցինք, տրտմեցինք: Ու դեռ շատ ենք թախծելու, վշտանալու, նաև՝ հպարտանալու նրանով, քանզի նա մեր անունը տանում էր հեռո՜ւ-հեռուներ ու տանելու է այսուհետ ևս:

Լ. Հարությունյանը մեր ազգի երևելի զավակներից, պայծառ անհատականություններից մեկն էր: Հոյակապ անձնավորություն ու մարդկային մի ողջ տիեզերք, մտքի ճարտարապետ ու հոգու բժիշկ, սիրո, գորովի, լավի ու բարու մի անծիր օվկիան...

Այսպիսին էր իմ ընկեր Լևոնը, որն ամեն պատեհ առիթով ասում, հիշեցնում էր. «Մանկավարժն ու բժիշկը սխալվելու առիթ չունեն, որովհետև երկուսն էլ գործ ունեն կենդանի մարդու հետ, նրանց երկուսին էլ մարդ է վստահված»:

Եվ ինքը երբեք չսխալվեց, իր ընտրած ուղին, մանկավարժի երկար ու ձիգ ճանապարհն անցավ պատվով, նվիրումով: Ընդունված խոսք է. մարդուն, որպես կանոն, հարգում, գնահատում են անձնական լավագույն հատկանիշների համար: Լևոնը անձնական հատկանիշ էր համարում նաև մասնագիտական պատրաստականությունը ու ջանում էր սաների հոգում բորբոքել, միշտ վառ պահել մայրենիի հանդեպ ունեցած սիրո կրակը՝ համոզված լինելով, որ հայերենը սիրող մարդիկ հատուկ ակնածանք են ունենում այն ամենի հանդեպ, ինչը հայեցի է ու հայինը:

- Նրա ամեն մի դաս մի ստեղծագործություն էր, մի հայտնություն՝ թե՛ երեխաների, թե՛ ուսուցիչների համար,- այսպես են ասում մոտիկից ճանաչողները, նախկին գործընկերները:

Հիրավի, նա ուսուցիչ չէր լոկ ու ոչ էլ՝ դասահարցնող ու գնահատական նշանակող: Պատկերավոր ասած՝ գրքից և ուսումնական ծրագրից շա՜տ ավելի հեռուն էր տեսնում նա, ապրում ժողովրդի բառ ու բանով, պոեզիայով, ճշմարիտ մտավորականի, շինականի պարզ ու համեստ առօրյայով: Հիշեցնենք, որ առաջին անգամ դասարան է մտել հարևան Եմիշճանի յոթնամյա դպրոցում, հետո աշխատել է Խերխանի ու Մյուրիշենի, հետո՝ Բերդաշենի ու Թաղավարդի (1959-1975թթ.) կրթօջախներում, դե իսկ, 75-ից մինչև կենսաթոշակի անցնելը՝ հայրենի Աշանի միջնակարգում: Ու, որ կարևոր է, փայլել է առարկայի գերազանց իմացությամբ, կոլեկտիվը ղեկավարելու (ուսմասվար է եղել, տնօրեն) ակնհայտ ունակությամբ և հմտությամբ, նորը, ուսանելին տեսնելու և արժևորելու կարողությամբ ու կամեցողությամբ, մի խոսքով՝ եղել է լավի, գեղեցիկի ջատագով, լավը պրոպագանդող: Ի դեպ, մանկավարժական թեմաներով թերթերում ու ամսագրերում, ինչպես նաև «Հայոց լեզուն ու գրականությունը դպրոցում» հանդեսում բազմիցս հանդես է եկել ուշագրավ հոդվածներով, մասնագիտական առանձին հարցերի, մեր պատմությանը վերաբերող կարևոր խնդիրների հիմնավոր բացատրություններով, յուրովի մեկնաբանություններով, որոնք գրեթե միշտ լայն արձագանք են գտել ընթերցողների շրջանում: Դե իսկ, հրատարակած գրքերի, ևս առավել՝ «Նշխարների» մասին, կարծում եմ, գիտեն բոլորը: Գիտեն նաև, որ այս ամենի համար նա արժանացել է պատվոգրերի ու գովասանագրերի, «Ստեղծագործական աշխատանքի համար» կրծքանշանի (տրվել է ՀՀ մանկավարժական ընկերության կողմից) ու «Վաչագան Բարեպաշտ» մեդալի: Համաձայնեք, այս բարձունքներին հասնելու համար ջանքեր են պետք, ուժ ու եռանդ: Եվ նա ունեցել է այս ուժն ու եռանդը: Համառորեն պարապել, կես ճանապարհին կանգ չի առել, իր հանգիստը գրի ու գրքի ընթերցանության մեջ է գտել, ժողովրդական զրույցների, հողվորից, կթվորից լսած պատմությունների, ասույթների մշակման մեջ: Ամենակարևորը, նա ձգտում էր հայ գրականությունը կրոնական, եկեղեցական աղոթքի պես ներարկել սաների արյան մեջ: Ու դա հաջողվում էր նրան: Մայրենիի իսկական նվիրյալը տասնյակ սերունդներ է ճանապարհել դեպի մեծ կյանք, եղել սաների, ծնողների, գործընկերների սիրելին, վայելել գյուղական համայնքի հարգանքն ու վստահությունը: Համագյուղացիների, բոլորի համար նա, իրոք, հեղինակություն էր, լավ խորհրդատու, կարեկից ընկեր ու բարեկամ: Նրանով ուրախանում ու նրա անունը գորովանքով, մի տեսակ պարծանքով էին արտասանում ոչ միայն յուրայիններ, մերձավորները, այլև ծանոթները, ճանաչները, մոտիկները: Բոլո՛ր: Ու այն էլ՝ ամենուր: Ծննդյան օրանո՛ւմ, Մարտունո՛ւմ, իր սրտին այնքա՜ն մոտ քաղաքամայր Ստեփանակերտո՛ւմ, Երևանո՛ւմ... Եվ սա՝ առանց չափազանցության: Այո, Լևոնին շատերը գիտեին: Հարյուրավորնե՛ր, հազարավորնե՛ր: Գիտեին, որ...

Գրում եմ այս տողերը ու խորապես ցավում, ափսոսում: Իսկապես, հոգու մեջ ցավ, վիշտ ես ապրում, երբ ստիպված ես լինում լավ մարդու մասին խոսել անցյալ ժամանակով: Ակամայից Վարպետի խորիմաստ տողերն ես հիշում. «Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական: Ըսել է՝ ինքն է մնացական: Լավ մարդը մահանում է, իսկ նրա լավ գործերը անուշացնում են աշխարհը»:

Այս բառերը, թվում է, հենց Լևոնի մասին են ասված, ով, իր առաքելությանը հավատարիմ, տարիներ, տասնամյակներ շարունակ սերունդներ է կրթել, դաստիարակել՝ տալով նրանց իր հոգու լույսն ու ջերմությունը:

Թերևս զարմանալի չէ, որ սգո միտինգում, խոսքերը մեկ արած, այս միտքը շեշտեցին, հատուկ ընդգծեցին դպրոցի այժմյան տնօրեն Մ. Շինդյանը, դարի լավագույն մանկավարժ Նորայր Ավետիսյանը (Հաղորտի), ԼՂՀ ԿԳՆ պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, Աժ նախագահի խորհրդական, հարգարժան Մուշեղ Օհանջանյանը, գրողների միության ներկայացուցիչ Վանիկ Նովիկովը, ուրիշներ:

Լևոն Հարությունյանը ազնիվ մղումներով օժտված մարդ էր, մեծ հայրենասեր ու մեծ քաղաքացի: Նրա ապրած 84 գարուններից ավելի քան 60-ը արարումի, նվիրումի տարիներ էին, ծով ուրախություններով, նաև՝ դառնության, տրտմության պահերով լեցուն տարիներ: Նա միշտ և ամենուր մեզ հետ էր, մեր կողքին: Ե՛վ ցուրտ ու մութ, և՛ լույս ու արև օրերին: Կասկած լինել չի կարող, որ բոլոր նրանք, ովքեր ճանաչել, շփվել են նրա հետ, կարոտով,սիրով, դեռ երկար, շա՜տ երկար տարիներ կհիշեն նրան, կհիշեն նրա համեստ խոսելաոճը, ուրախ կատակով և հումորով համեմված խոսքն ու զրույցը...

Բոլորի տխո՜ւր-տխուր հայացքներում ես այս բառերն էի կարդում, այս մտքերն էի պարզորոշ տեսնում: Մի բան, որ ամենևին էլ զարմանալի չէր, ոչ էլ՝ անսպասելի:

Անվանի մանկավարժին վերջին հրաժեշտը տալու և նրա շիրմի առաջ գլուխ խոնարհելու համար այստեղ (Աշան) էին ժամանել ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը, կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, ղեկավար շատ աշխատողներ, աճող սերնդի դաստիարակներ, շրջակա գյուղերի ներկայացուցիչներ: Իրոք, մեծ հոգու, մեծ սրտի, ծով խելքի ու մաքուր խղճի տեր մարդ էր Լևոն Հարությունյանը, որին, արդարև, կարելի է համարել ոչ միայն 20-րդ, այլև բոլոր ժամանակների, գալիք բոլոր դարերի լավագույն մանկավարժ:

Ափսոս, որ նա այսօր մեզ հետ չէ, մեր շարքերում: Հազար ափսոս, որ այսուհետ նրա անունը տալիս, նրա մասին խոսելիս պիտի ասենք՝ եկա՜վ ու... գնաց:

Բայց ես կարծում եմ, որ այս բառերին անմիջապես պիտի հավելենք՝ այո՛, մարմնավորն ամփոփվեց մայր հողի գրկում, բայց հոգևորը... մնաց: Մնաց հավիտյան ու հավիտենականության հետ: Ասել կուզի՝ նա դեռ ապրում է, կա՛: Ապրում է կրթական համակարգի բարեփոխմանն ու բարելավմանը, հայրենի եզերքի շենացմանն ու բարգավաճմանը մատուցած ծառայություններով, սուրբ նշխար դարձած իր «Նշխարներով», այնքա՜ն օգտակար խորհուրդներով, պատգամներով, իր տվածով ու տարածով, հայրենի հողի, ջրի հանդեպ ունեցած իր անափ սիրով, կարոտով: Ապրում է ու... կապրի: Կապրի երկա՜ր-երկար տարիներ, դար ու դարեր, քանզի, ինչպես Մեծն Վիլյամ Սարոյանն է ասել, բարին երբեք չի մեռնում... Եթե մեռներ, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ու ոչ մի տեղ կյանք չէր լինի:

Միքայել ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ
գ. Մեծ Թաղեր

Ո՛Չ՝ ԱՂԱՆԴՆԵՐԻՆ

ԵՐԿՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀՈԳԵՎՈՐ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՔՈՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Սույն թվականի մայիսին ԼՂՀ կառավարությունն ընդունել է «Կրոնական թեմաներով գրականության և ծիսական նշանակության առարկաների արտադրության, ներմուծման և վաճառքի նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» որոշումը: Որոշման դրույթները պարզաբանելու նպատակով Արցախի ժուռնալիստների միությունը վերջերս «Արմենիա» հյուրանոցի մամուլի սրահում կազմակերպեց լրագրողների հանդիպում ԼՂՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի վարիչ Աշոտ Սարգսյանի հետ: Հրավիրվել էին նաև Արցախում գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ի՞նչ անհրաժեշտությունից ելնելով է կառավարությունը նման որոշում ընդունել: Հարցին պատասխանելու համար Աշոտ Սարգսյանն անհրաժեշտ համարեց անդրադառնալ մինչ պատերազմը Արցախի հոգևոր դաշտում տիրող իրավիճակին: Անցած դարի 80-ական թվականների վերջին Արցախ մուտք գործեց «Ագնի յոգա» կրոնական կազմակերպությունը: Ստեփանակերտի նախկին «Գարուն» ռեստորանում հումանիտար օգնություն և գրականություն էին բաժանում: Ա. Սարգսյանը, որպես հրամանատար, որի լիազորությունների մեջ էր այդ տարածքի հսկողությունը, առգրավեց այդ գրականությունը՝ ասելով, որ ռազմական դրության պայմաններում արգելվում է նման կրոնական կազմակերպությունների գործունեությունը: Այնուհետև, պատերազմի ժամանակ, 1993թ. Արցախում ի հայտ եկավ «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությունը: Նրանք ակտիվորեն սկսեցին տարածել իրենց գրականությունը ու նաև քարոզչություն անել ժողովրդի շրջանում: Նպատակը պարզ էր. քարոզվում էր զենքը ցած դնել, որ պատերազմը սատանայի գործ է: Ռազմական դրության պայմաններում կոչ անել զենքը ցած դնել՝ հասկանալի է ինչի կհանգեցներ:

Պատերազմն ավարտվելուց հետո Արցախ ներթափանցեցին նաև մյուս կրոնական կազմակերպությունները՝ բապտիստներ, հոգեգալստչականներ և ուրիշներ: Համապատասխան ծառայության տվյալներով՝ Արցախ են ներթափանցել 20-ից ավել կրոնական կազմակերպություններ և հոսանքներ, սակայն փորձության չդիմանալով՝ նրանց մի մասը դուրս է եկել: Փաստորեն 1993-ից ի վեր Արցախում կուտակվել է ահռելի քանակությամբ հոգևոր գրականություն, որն այս կամ այն ձևով սպառնում է մեր պետության անվտանգությանը, հասարակության բարոյականությանը, կարգ ու կանոնին, ինչը մեր Սահմանադրությամբ արգելվում է:

2009թ. հունվարին ԼՂՀ-ում ընդունվեց «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը: Երբ այն սկսեցին կիրարկել, խնդիր ծագեց 22-րդ հոդվածի 4-րդ կետի մասով, ըստ որի, կառավարության համապատասխան բաժինը վերահսկողություն է իրականացնում Արցախում գործող կրոնական կազմակերպությունների կողմից օգտագործվող գրականության և տեղում արտադրվող կամ ներմուծվող հոգևոր բնույթի իրերի վրա: Բաժինն իր գործառույթներն իրականացնելու համար չուներ համապատասխան կարգ: Այդ հարցով դիմեց կառավարությանը, որովհետև Արցախ անարգել մուտք էր գործում կրոնական գրականություն: 2010թ. փետրվարի 8-ին ընդունվեց համապատասխան կարգ: Արդյունքում «Եհովայի վկաների» մեկուկես տոննա (չկարողացան հաշվել) կշռով գրականությունը (47 անուն)՝ գիրք, ձայնասկավառակներ, բերվեց բաժին, որից 42-ի վերաբերյալ բաժինը տվեց փորձագիտական բացասական եզրակացություն, իսկ մնացած 5-ը վերադարձվեց նրանց: Ի դեպ, նրանք էլ ունեն Աստվածաշունչ, սակայն՝ խեղաթյուրված: Ա. Սարգսյանն այնուհետև ներկայացրեց եհովականների պատասխան քայլը: Նրանք դատի տվեցին: Արցախ եկան միջազգային իրավաբաններ և փորձում էին չեղյալ հայտարարել կառավարության աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ որոշումը՝ գտնելով, որ դա իրավական ուժ չունի: Բայց նրանք սխալվեցին, որովհետև չգիտեին, որ կառավարության աշխատակազմի ղեկավար, որը նաև նախարար է, որոշումն ուժ ունի: Հաջորդ խնդիրն այն էր, որ այդ որոշումն ազդեցիկ լինի, որի համար պետք է լիներ կառավարության որոշում՝ ենթաօրենսդրական ակտերով: Եվ եղավ նաև վերը նշված այդ որոշումը: Եվ ըստ այդ որոշման, Արցախ մուտք գործած կրոնական գրականության ցանկացած նմուշ պարտադիր պետք է բերվի բաժին, որը երեք օրվա ընթացքում պետք է տա փորձագիտական եզրակացություն: Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերով բաժնի վարիչի տեղեկացմամբ՝ վարչապետին կից կա կրոնի խորհուրդ, որում ընդգրկված են գրանցված կրոնական և հասարակական կազմակերպությունների, նախարարությունների, պետանվտանգության, ոստիկանության ներկայացուցիչներ:

Այս էր «Կրոնական թեմաներով գրականության և ծիսական նշանակության առարկաների արտադրության, ներմուծման և վաճառքի նկատմամբ հսկողություն իրականացնելու» որոշման ընդունման նախապատմությունը:

Այնուհետև լրագրողները հարցեր ուղղեցին կրոնի հարցերով կառավարության աշխատակցին: Այսպես, նոր ուսումնասիրողն ինչպե՞ս տարբերի՝ աղավաղվա՞ծ է, թե՝ ոչ Աստվածաշունչը: Ա. Սարգսյանը պարզաբանեց. ցանկալի է, որ այդ գրականությունը բերեն բաժին, որտեղ կտան փորձագիտական եզրակացություն: Բաժնի վարիչի տեղեկացմամբ՝ Ռուսաստանի նման հսկա պետությունում գործում են ծայրահեղականության դեմ պայքարի օրենքներ, և որ մեզ մոտ էլ արդեն նման օրենքի նախագիծ է պատրաստվում: «Ծայրահեղականության դեմ պայքարի» մասին այդ օրենքի համաձայն՝ ՌԴ-ում կա սահմանված 857 անուն գրականություն, որը երկրի ողջ տարածքում արգելվում է: Տարածողներին նշանակվում է 1000 ռուբլի տուգանք: Այն մարդիկ, ովքեր այդ գրքերն ունեն իրենց տներում՝ նույնպես համապատասխան տույժի են ենթարկվում: Նույնպիսի օրենք գործում է աշխարհի շատ պետություններում: Մասնավորապես, մեր հարևան բոլոր պետություններում՝ Ադրբեջանում, Իրանում, Վրաստանում, խստիվ արգելանք կա այն գրականության նկատմամբ, որը, նրանց կարծիքով, սպառնում է իրենց երկրների անվտանգությանը:

Լրագրողներին հետաքրքրում էր, թե ինչպիսին է վիճակը ՀՀ-ում, և ինչ առանձնահատուկ վերաբերմունք պետք է ունենա Արցախը:

Ա. Սարգսյանի խոսքով, ցավոք, Հայաստանում այդ «իմունիտետը» չկա: Ցանկացած գրականություն, իրեր ներմուծվում են առանց արգելքի: Մեզ մոտ էլ, Քաշաթաղի շրջանում հայտնաբերվել են նման պաշտամունքային իրեր՝ շրջված խաչեր, արյունոտ կեռախաչեր՝ բերված Հայաստանից: Այնտեղ չկա նույնիսկ որոշում հոգևոր գրականության վերաբերյալ: Հայաստանում կրոնական կազմակերպությունների մասին նոր օրենք են ուզում ընդունել: Ա. Սարգսյանի արտահայտությամբ, «ավելի խայտառակ օրենք, քան դա, մենք չենք պատկերացնում: Վերջին 10 տարիների ընթացքում աշխարհի 47 պետություններում «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքներն ավելի են խստացվել, բայց ՀՀ-ում 1991-ից ի վեր չորս անգամ օրենքում փոփոխություններ են կատարել, և չորս անգամ ավելի մեղմացրել»: Դա պայմանավորված է նրանով, որ (եթե հավատալու լինենք համապատասխան մարմինների փաստարկումներին) Եվրամիություն մտնելու համար ՀՀ-ի առջև մի շարք խնդիրներ են դրվում՝ սեռական փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքի մեղմում, աղանդավորական կազմակերպությունների գրանցում (թվով 32, այդ թվում՝ «Եհովայի վկաներ»), մահապատժի վերացում: Փաստորեն Հայաստանը իր առջև դրված այդ օրենսդրական պահանջները բարեխղճորեն կատարել է:

Հասարակ քաղաքացին ինչպե՞ս տարբերի՝ իրեն սիրալիր առաջարկվող գրականությունը փորձաքննություն անցե՞լ է, թե՞ ոչ: Ա. Սարգսյանը պատասխանեց, որ նպատակահարմար են գտնում ծայրահեղական գրականության ցանկը հրապարակել, որպեսզի քաղաքացիներն իմանան: Բայց ցավոք, այն ամբողջ գրականությունը, որ օգտագործում են աղանդավորները, իրենց բաժինը չունի: Այդ հարցում օգնության պետք է գան իրավապահները: Ցավոք, այսօր մենք պատրաստ չունենք և՛ քրեական օրենսգիրք, և՛ վարչական օրենսգիրք, ՀՀ-ում էլ դեռ փոփոխության չեն ենթարկվել երբ լինեն, կհամապատասխանեցվեն, և անօրեն կրոնական գրականության միջոցով քարոզչություն տարածողները կպատժվեն: Ամբողջ խնդիրն այն է, որ խստացվի այդ գործունեությունը, ինչպես իրենց հարգող շատ երկրներում:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԹԱՓՎԵԼ Է ՊԵՏՔ ԵՎ ԴԵՄՆ ԱՌՆԵԼ ԱԶԳՈՎԻ

Հին ժողովրդական ասացվածք կա՝ տանդ դուռը փակ պահիր, ուրիշին էլ գող մի հանիր, իսկ ես այսպես կասեի՝ տանդ դուռը փակ պահիր, Եհովայի վկաներից էլ զգուշացիր: Մեր ազգը հյուրասեր է, բայց ոչ աներես, ոչ պնդերես, ոչ պնդաճակատ, ոչ անկոչ հյուր գնացող: Այս մարդիկ որտեղի՞ց ձեռք բերեցին այդ հատկանիշները: Ռասելի սերմի՞ց: Եվ արդյո՞ք հայ ազգին այսօր պետք են սրանք: Ասում են՝ սրանց կենտրոնում (Բրուկլին, Նյու Յորքի նահանգ) «Աստվածաշնչի դիտարան դպրոց»-ում նոր ձևով են թարգմանում Սբ. Գիրքը:

Գլուխը քարը, թե Բրուկլինում ինչ են անում, բայց մեզ համար սրանք շատ վտանգավոր են իրենց քարոզով, իրենց խոսքով ու գործով ու իրենց վարակով: Սրանք պետություն չեն ընդունում, մենք հազարավոր զոհերի արյան գնով ենք այն ստեղծել, սրանք չեն ողջունում որևէ երկրի դրոշ, մերժում են զինվորական ծառայությունը, չեն մասնակցում ընտրություններին, մերժում են եկեղեցին, նրա ծեսերը, մեր ազգային, պետական տոները, մխրճվում են համերաշխ ընտանիքների մեջ, գողանում նրանցից մեկի խելքը, քայքայում ընտանիքը՝ զրկելով երեխաներին կամ հորից, կամ մորից:

Որ մեկն ասեմ կամ ասեմ՝ ինչ անեմ: Մեկ է, լռում ենք: Լռում ենք մենք ու նրանց տեղ տալիս մեր կողքին, լռում ենք ու մեր տան դուռը չենք փակում նրանց երեսին, լռում են մեր պետական այրերն ու չեն կանգնեցնում նրանց: Մինչև ե՞րբ: Մինչև էլ զինվոր չունենա՞նք բանակ ուղարկելու և բացե՞նք սահմանները:

Հիսուսն ասել է, որ ոչ ոք չգիտի իր վերադարձի օրը, ոչ հրեշտակները, ոչ նույնիսկ Որդին, այլ միայն Հայրը: Բա սրանք որտեղի՞ց իմացան ու իրենց հորջորջեցին Եհովայի վկաներ: Դեռ մեզ էլ փորձում են փրկել «հավիտյան կորստից»:

Հիսուսն ազդարարել էր.

«Սուտ Քրիստոսն ու սուտ մարգարեները պիտի երևան՝ խաբելու նույնիսկ ընտրյալին: Տեսե՛ք, ես ձեզ ասում եմ ժամանակից առաջ»:

Ես գտնում եմ, որ խոսքը տարբեր աղանդների ու նաև այս «վկաների» մասին է, վկաներ, որոնք ներսից քանդում են մեր միասնականությունը, խարխլում մեր պետականության հիմքերը և սպառնում մեր երկրի անվտանգությանը: Արտաքին թշնամին դրսից չհասավ դրան, փոխարենը մերոնք են ներսում անում այդ ամենը: Հայ ժողովրդի պատմության արդի ժամանակաշրջանում սա դավաճանության յուրահատուկ ձև է՝ թելադրված արտաքին աշխարհի կողմից: Ես այդպես եմ մտածում: Վերջերս, երբ հերթական վկային վռնդում էի մեր տնից, գիտե՞ք նա ինչ ասաց.

- Կարծում եք Ադրբեջանում Եհովայի վկաներ չկա՞ն: Այնտեղ ավելի շատ կան, շուտով մենք կմիանանք իրար:

Բայց սրանք այստեղ Հիսուս-Փրկչին են սպասում, բա Ադրբեջանում ով է Փրկիչը՝ Հիսո՞ւսը, թե՞ Մուհամմեդը:

Սրանք լոկ հարցեր չեն, այլ ահազանգ, ահազանգ հոգևոր և պետական տասներկու բալանոց երկրաշարժի:

Մեղք գործելը ոչ միայն սովորում են, այլև ժառանգում, ասել է մի իմաստուն: Ումի՛ց ժառանգեցիք այդ մեղքը, ա՛յ «վկաներ»: Չէ՞ որ ձեր պապերն ու ապուպապերը զերծ են եղել դրանից: Նրանք եղել են քաջարի ու աստվածավախ մարդիկ, երկյուղով և խոնարհումով մտել են եկեղեցի, մոմ վառել, աղոթել իրենց անցյալի, ներկայի ու նաև ապագայի, այսինքն՝ նաև ձեզ համար, կառուցել են եկեղեցիներ, որ այնտեղ ձեր մեղքերի համար թողություն խնդրեք:

Սթափվել է պետք և դեմն առնել ազգովի: Շատ երկրներում «վկաների» գործունեությունն ընդհանրապես արգելված է: Մե՛զ ինչ է եղել, ինչո՞վ ենք լավ նրանցից: Իմ բողոքը մարդ արարածի դեմ չէ: Նրանք դեռ իմ ազգի մասնիկն են: Իմ պայքարը սատանայական գաղափարների և այդ գաղափարները մեր նրբիկ ու նորընծա պետությանը խարխլող ուժերի դեմ է:

Մարդն արարվել է կատարյալ, նրան տրվել է խելք և կողմնորոշվելու կարողություն: Եկեք կողմնորոշվենք ճիշտ և օգնենք նաև կողմնորոշվելու մեր մոլորյալներին: Խոսքս ուզում եմ վերջացնել Կորնթացու պատգամով. «Արթուն կացեք, հավատքի մեջ հաստատ կացեք»:

Ժ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՈՒՍՊԼԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2012 թվականի հունիս 25-ի
N 115-Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ

1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ օրինակելի ուսումնական պլաններ), բացառությամբ 7-րդ աղյուսակի, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող հաստատությունը, օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ, հաստատում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական պլանը:

1. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,

3) օրենքով սահմանված կարգով երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում,

4) օրենքով սահմանված կարգով երաշխավորված մանկավարժական գիտափորձ իրականացնելու համար:

2. Ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Ընդհանրական պարզաբանումներ»-ում,

2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

3. Ուսումնական պարապմունքները հաստատությունում սկսվում են 2012 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում՝ 2013 թվականի մայիսի 24-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32 ՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

4. Հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է հաստատությունը, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունում՝ հիմնադիրը: Հաստատությունը, յուրաքանչյուր կիսամյակը սկսելուց առաջ, առնվազն տասնհինգօրյա ժամկետում, այդ հարցը համաձայնեցնում է Նախարարության հետ:

5. Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է ուսումնական հաստատության պլանի հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային համակարգ:

8. Ընթացիկ գնահատման ժամանակ կարող են կիրառվել նաև գնահատման այլ համակարգեր, որոնք բերվում են 10 միավորային գրանցման: Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման համակարգերը բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

9. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները, բացառությամբ 10-րդ կետով նախատեսված դեպքի:

10. 180-240 ժամ բացակայելու դեպքում, «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ տվյալ դասարանի ուսումնական պլանով նախատեսված հինգ առարկաներից անցկացվում են քննություններ, իսկ մյուս առարկաներից՝ ամփոփիչ ստուգողական աշխատանքներ («ֆիզկուլտուրա» առարկայից նորմատիվների հանձնում): Քննությունների և ստուգողական աշխատանքների գնահատականները 2-11-րդ դասարանների սովորողների համար համարվում են տարեկան գնահատականներ:

Որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում կիսամյակային գնահատականներ չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են սույն կետով նախատեսված քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների արդյունքում:

11. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում, ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

12. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է:

13. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

14. Ուսումնական տարվա ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2012 թվականի հոկտեմբերի 22-ից 28-ը ներառյալ, ձմեռային՝ 2012 թվականի դեկտեմբերի 29-ից 2013 թվականի հունվարի 13-ը ներառյալ, գարնանային՝ մարտի 18-ից 24-ը ներառյալ:

15. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տևում են հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռայինը՝ դեկտեմբերի 29-ից 2013 թվականի հունվարի 27-ը ներառյալ, իսկ գարնանայինը՝ մարտի 18-ից մարտի 31-ը ներառյալ:

16. Երկրորդ դասարանցիների արձակուրդները տևում են 2012 թվականի հոկտեմբերի 22-ից 28-ը ներառյալ, դեկտեմբերի 29-ից 201 3թվականի հունվարի 27-ը ներառյալ և մարտի 18-ից 24-ը ներառյալ:

17. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար վերևում սահմանված արձակուրդների ժամկետներում, հաստատության նախաձեռնության դեպքում, լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ՝ առնվազն 5 օր առաջ համաձայնեցնելով Նախարարության հետ:

18. Հաստատությունը (անկախ ենթակայությունից), դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսների ընթացքում՝ եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում, կարող է նախատեսել մինչև 10 օր տևողությամբ հավելյալ արձակուրդ՝ բաց թողած ժամերը լրացնելու և ըստ ենթակայության՝ լիազոր մարմնին և Նախարարությանը՝ 5-օրյա ժամկետում տեղեկացնելու պայմանով:

1) Նախարարության ենթակայության հաստատություններում վերոնշյալ արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև հաստատության կողմից հավելյալ արձակուրդի նախատեսումը կատարվում են նույն ընթացակարգով:

2) Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 օր առաջ տեղյակ պահելով Նախարարությանը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

19. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

2) Նախարարությունը կարող է երաշխավորել «Կիրառական տնտեսագիտություն», «Կյանքի հմտություններ», «Բնապահպանություն», «Էկոլոգիա», «Էներգիայի և ռեուրսների օգտագործում», «Ֆերմերային գործ», «Տրամաբանություն», «Գրաբար», «Հայոց եկեղեցու պատմություն» (տարրական դպրոց, ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսք), «Հայկական հարցի պատմություն», «Հոգեբանություն», «Բարոյագիտություն», «Մշակույթի պատմություն» առարկաների ուսուցումը՝ հաստատության կողմից դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության հաստատմանը ներկայացվելու դեպքում:

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարությանը հաստատման ներկայացնելու դեպքում:

Հաստատության տնօրենը ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով հաստատության, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

4) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

5) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է հաստատության ուսպլանում և դասացուցակում:

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը ուսումնական պլանի պետական բաղադրիչում ընդգրկված առարկաներին տրամադրվելու դեպքում դասարանը կիսելու հարցը կարգավորվում է «Հաստատության ուսումնական պլանի ընդհանրական պարզաբանումների» համաձայն: Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» առարկայի պարապմունքների ժամանակ:

7) 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում:

20. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական թեմաների ուսումնասիրությունն իրականացվում է առաջին կիսամյակում:

2) 12-րդ դասարանում ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է անհատական և խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների անհատական և խմբային ուսուցման ժամանակացույց:

3) Երկրորդ կիսամյակում քննական առարկաների (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի) կրկնությանը հատկացված ժամաքանակը չի կարող պակաս լինել այդ առարկաներին առաջին կիսամյակում օրինակելի ուսպլանով հատկացված ժամաքանակից:

4) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումը պետք է իրականացվի խմբային եղանակով, շաբաթական 34 ժամ ծավալով՝ յուրաքանչյուր սովորողի համար:

5) Բնագիտական առարկայի(ների) դասաժամին տվյալ ուսումնական հաստատության 12-րդ դասարանի(ների) բոլոր սովորողները խմբավորվում են ըստ իրենց կողմից ընտրված բնագիտական առարկայի(ների): Նույն սկզբունքով կատարվում է նաև օտար լեզվի խմբի (խմբերի) ձևավորումը:

6) Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է՝ ըստ առարկաների ձևավորված յուրաքանչյուր խմբերի, անկախ սովորողների թվից, հատկացնել շաբաթական միևնույն քանակի դասաժամ:

7) Խմբերում սովորողների խտությունը չի կարող գերազանցել 10-12-րդ դասարանների համար սահմանված առավելագույն թիվը՝ 30 սովորող:

8) Ուսումնական պլանով նախատեսված ոչ քննական առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են սովորողների առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա:

☞ 6

ՈՒՍՊԼԱՆ

5 ա. Քննական առարկաների տարեկան գնահատականները նշանակվում են առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականի և երկրորդ կիսամյակում բանավոր ստուգման, գործնական և գրավոր աշխատանքների գնահատականների արդյունքում ձևավորված կիսամյակային գնահատականի միջին թվաբանականի հիման վրա, բացառությամբ սույն կետի 9-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

բ. Քննական յուրաքանչյուր առարկայից տրվում են ստուգողական աշխատանքներ: Այդ աշխատանքները տրվում են կրկնվող թեմայի, ինչպես նաև մի քանի բովանդակային ամբողջություն կազմող քննական ծրագրային նյութերի ամփոփումից հետո:

գ. Բանավոր ստուգման, գործնական և գրավոր աշխատանքների գնահատականները լրացվում են դասամատյաններում:

9) 180-240 ժամ բացակայելու դեպքում «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ տվյալ դասարանի ուսումնական պլանով նախատեսված հինգ առարկաներից անցկացվում են քննություններ, իսկ մյուս առարկաներից՝ ամփոփիչ ստուգողական աշխատանքներ («Ֆիզկուլտուրա» առարկայից նորմատիվների հանձնում): Քննությունների և ստուգողական աշխատանքների գնահատականները 12-րդ դասարանի սովորողների համար համարվում են տարեկան գնահատականներ:

ա. որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում կիսամյակային (տարեկան) գնահատականներ չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են սույն կետով նախատեսված քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների արդյունքում:

21. Օտար լեզվի ընտրության կարգ

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներից որևէ մեկը:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ սկսած 5-րդ դասարանից, Նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 5-րդ դասարանում 3-րդ ու 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ ու 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում են 1-ական ժամ՝ դպրոցական բաղադրիչից կամ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից:

3) Հաստատությունը դասավանդվող երկրորդ օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ հաստատության ենթակայության՝ լիազոր մարմնի առաջարկությունները օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում:

4) Նոր հիմնադրված հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն, ըստ հաստատության մանկավարժական խորհրդի և հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների՝ որոշում է Նախարարությունը:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

22. Հաստատության դասարանների միջին խտությունը՝ կրթական երեք աստիճանների համար սահմանվում է 25-30 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, ընդ որում, սովորողների թիվը 1-9-րդ դասարաններում չի կարող գերազանցել 35-ը, իսկ 10-12-րդ դասարաններում՝ 30-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել հաստատության լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հաշվին՝ հաստատության խորհրդի որոշմամբ:

23. Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ), եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է, «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Շախմատ» առարկաների դասաժամերին կարելի է դասարանը բաժանել երկու խմբի:

24. Միջին դպրոցում «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է:

«Տեխնոլոգիա» առարկայի պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների,եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

25. 10-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և ավագ դպրոցի արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 30 և ավելի է:

26. Նախնական զինվորական պատրաստության ծրագիրը սովորողները կարող են յուրացնել նաև նախաբանակային պատրաստության ճամբարներում:

27. Անհրաժեշտության դեպքում հաստատությունն իրավասու է, Նախարարության համաձայնությամբ, վերաբաշխելու առարկաների ուսուցմանը օրինակելի ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

28. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

29. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել Նախարարության կողմից երաշխավորված էլեկտրոնային ուսումնական նյութերը (լազերային սկավառակներ և այլն):

30. «Համաշխարհային պատմություն» և «Հայոց պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարել նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված ընդհանուր ժամաքանակը:

4. ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՍՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

31. Օրինակելի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցում (այսուհետ՝ Ավագ դպրոց) միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական), ընդհանուր հանրակրթական, դպրոցական և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

32. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,

2) լրացուցիչ՝ արվեստի, մարզական, ռազմական,

3) ընդհանուր:

33. Ավագ դպրոցի X-XII դասարանների ուսումնական պլանները՝ ըստ հոսքերի տրված են.

1) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանի ուսումնական պլան»-ում,

2) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանի ուսումնական պլան»-ում,

3) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանի ուսումնական պլան»-ում,

4) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (տես՝ Աղյուսակ 1):

34. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2012 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում են 2013 թվականի մայիսի 24-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ:

35. Պետական Ավագ դպրոցում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է Ավագ դպրոցը, իսկ ոչ պետական Ավագ դպրոցում՝ հիմնադիրը:

Ավագ դպրոցը, կիսամյակը սկսելուց առնվազն տասնհինգ օր առաջ այդ հարցը համաձայնեցնում է Նախարարության հետ:

36. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:

37. Ավագ դպրոցում գործում է գնահատման 10 միավորային համակարգ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող են կիրառվել նաև գնահատման այլ համակարգեր, որոնք բերվում են 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման համակարգերը բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

38. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է:

39. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները, բացառությամբ Հավելված 1-ի 43-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

40. Ուսումնական տարվա ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2012 թվականի հոկտեմբերի 22-ից 28-ը ներառյալ, ձմեռային՝ 2012 թվականի դեկտեմբերի 29-ից 2013 թվականի հունվարի 13-ը ներառյալ, գարնանային՝ մարտի 18-ից 24-ը ներառյալ:

41. Ավագ դպրոցի դասարանների միջին խտությունը ուսպլանի ընդհանուր հանրակրթական ուսուցման առարկաների դասերին սահմանվում է 20-25 սովորող (ընդ որում՝ ընդհանուր հանրակրթական առարկաների դասերին սովորողների թիվը չի կարող գերազանցել 30-ը):

42. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ (ընդ որում, հոսքային ուսուցման առարկաների դասերին սովորողների թիվը չի կարող գերազանցել 20-ը):

43. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում

1) 12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական թեմաների ուսումնասիրությունն իրականացվում է առաջին կիսամյակում:

2) 12-րդ դասարանում ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է անհատական և խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների անհատական և խմբային ուսուցման ժամանակացույց:

3) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումը պետք է իրականացվի խմբային եղանակով՝ յուրաքանչյուր սովորողի համար՝ ապահովելով շաբաթական 34 դասաժամ:

4) Առաջին կիսամյակում համալրված դասարանները, երկրորդ կիսամյակում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա» քննական առարկաների դասաժամերին սովորողների ուսումնառությունը շարունակվում է նույն համակազմով՝ որպես մեկ ուսումնական խումբ:

5) Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների, ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է՝ ըստ առարկաների ձևավորված խմբերի, անկախ սովորողների քանակից, հատկացնել միևնույն քանակի շաբաթական դասաժամ, որը պետք է պակաս չլինի օրինակելի ուսումնական պլանով առաջին կիսամյակում այդ առարկաների համար նախատեսված ժամաքանակից: Սույն դրույթի պահանջը չի տարածվում «Ֆիզկուլտուրա» առարկայի վրա:

6) Բնագիտական առարկաների դասաժամերին տվյալ ուսումնական հաստատության 12-րդ դասարանի(ների) բոլոր սովորողները խմբավորվում են ըստ իրենց կողմից ընտրված բնագիտական առարկայի(ների): Նույն սկզբունքով կատարվում է նաև օտար լեզվի խմբի (խմբերի) ձևավորումը:

7) Ուսումնական պլանով նախատեսված ոչ քննական առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են սովորողների առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա:

ա. Քննական առարկայի տարեկան գնահատականը նշանակվում է առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականի և երկրորդ կիսամյակում բանավոր ստուգման, գործնական և գրավոր աշխատանքների գնահատականների արդյունքում ձևավորված կիսամյակային գնահատականի միջին թվաբանականի հիման վրա:

բ. Քննական յուրաքանչյուր առարկայից տրվում են ստուգողական աշխատանքներ: Այդ աշխատանքները տրվում են կրկնվող թեմայի, ինչպես նաև մի քանի բովանդակային ամբողջություն կազմող քննական ծրագրային նյութերի ամփոփումից հետո:

գ. Բանավոր ստուգման, գործնական և գրավոր աշխատանքների գնահատականները լրացվում են դասամատյաններում:

8) 180-240 ժամ բացակայելու դեպքում, «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված, տվյալ դասարանի ուսումնական պլանով նախատեսված հինգ առարկաներից անցկացվում են քննություններ, իսկ մյուս առարկաներից՝ ամփոփիչ ստուգողական աշխատանքներ («Ֆիզկուլտուրա» առարկայից նորմատիվների հանձնում): Քննությունների և ստուգողական աշխատանքների գնահատականները 12-րդ դասարանի սովորողների համար համարվում են տարեկան գնահատականներ:

ՈՒՍՊԼԱՆ

Որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում կիսամյակային (տարեկան) գնահատականներ չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են սույն կետով նախատեսված քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների արդյունքում:

44. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը

Հոսքային (խորացված) ուսուցման օրինակելի ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչներից:

ա. Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակներն՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:

բ. Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչներում ընդգրկված առարկաներն (դասընթացներն) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որևէ որակավորման ձեռքբերմանը:

գ. Դպրոցական բաղադրիչը հոսքային ուսուցման դեպքում ընդգրկում է հետագա մասնագիտական կրթության նախապատրաստմանն ուղղված ընտրովի առարկաներ, դասընթացներ և յուրաքանչյուր առարկայի (դասընթացի) համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

դ. Ավագ դպրոցն, օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին:

ե. Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:

զ. 10-12-րդ դասարաններում դասարանի շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

45. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ

1) Ընդհանուր հոսքում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ դասարանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի մեջ մտնող առարկաներին, իսկ հոսքային ուսուցմամբ դասարաններում՝ նաև հոսքային ուսուցման առարկաներին:

Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար», «Գրականագիտություն» (գրականության տեսություն), «Արտասահմանյան գրականություն», «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան), «Ճարտասանություն», «Ժամանակակից գրական գործընթաց», «Արևմտահայերեն», «Իրավունքի պատմություն», «Հայկական հարցի պատմություն», «Հայ մշակույթի պատմություն», «Հնագիտություն», «Հայաստանի պատմական աշխարհագրություն», «Ազգագրություն», «Հայաստանի հարակից երկրների պատմություն», «Կրոնի պատմություն», «Արվեստի պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք), «Կիրառական տնտեսագիտություն», «Տրամաբանության հիմունքներ», «Թվային համակարգեր», «Երկրաչափության հիմունքներ», «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր», «Աստղագիտություն», «Ռադիոէլեկտրոնիկա», «Էկոլոգիա», «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ», «Կիրառական քիմիա», «Գիտական ճանաչողության հիմունքներ», «Բնական գիտությունները և մաթեմատիկան», «Բնագիտական մտքի պատմություն», «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում», «Տեխնոլոգիա» առարկաների ուսուցումը՝ հաստատության կողմից դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարություն հաստատման ներկայացվելու դեպքում:

2) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարությանը հաստատման ներկայացնելու դեպքում:

3) Ավագ դպրոցի տնօրենը ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից, հոսքային կամ առանձին առարկաների խորացված կրթական ծրագրերի իրականացման և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով Նախարարության հանձնարարականները:

ա. Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկն ամրագրվում է դպրոցի ուսպլանում և դասացուցակում.

բ. եթե դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվել է ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված առարկաներին, ապա դասարանը կիսելու հարցը կարգավորվում է Հավելված 1-ի մաս 3-ի («Հաստատության ուսումնական պլանի պարզաբանումներ») 25-րդ կետով սահմանված կարգով:

46. Օտար լեզվի ընտրության կարգ

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

2) Երրորդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու կարելի է դասավանդել հումանիտար հոսքում, ոչ ավելի, քան այդ հոսքում Հոսքային բաղադրիչ 1-ում «Օտար լեզու1» առարկային տրամադրված ժամաքանակի չափով՝ Նախարարության կողմից համապատասխան ծրագրի և ուսումնական գրականության երաշխավորության հիման վրա:

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում:

4) Նոր հիմնադրված ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն, հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ, որոշում է Նախարարությունը:

47. Սույն օրինակելի ուսումնական պլանի ենթահավելվածի աղյուսակների պարզաբանումներ

1) Աղյուսակ 1-ում, Աղյուսակ 5-ում, Աղյուսակ 6-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով:

2) Ենթահավելվածի Աղյուսակ 2-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ խորացված ուսուցման առարկաներ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը».

գ. «3» նշագրումը նշանակում է, որ նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով.

դ. Օտար լեզու 1 ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու 2» առարկան, «Ռուսաց լեզու» առարկան ուսումնասիրում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչով սահմանված ժամաքանակով: Օտար լեզու 1 և Ռուսաց լեզու 1 ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու 2» և «Ռուսաց լեզու 2» առարկաները:

3) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ (տե՛ս 47-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերության պարզաբանումը): Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում ուսպլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները:

4) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տնօրինվում է 45-րդ կետի համաձայն:

5) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլանով (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 2):

ա. 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է հարակից առարկաների ծրագրով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով.

բ. 11-րդ դասարանում հումանիտար հոսքի ենթահոսքերից յուրաքանչյուրի սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի հարակից առարկաների, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի ծրագրով.

գ. 12-րդ դասարանում բնագիտական առարկաներից սովորողների ուսուցումը շարունակվում է 10-րդ դասարանում նրանց ընտրած բնագիտական հոսքի հարակից առարկայի ծրագրով.

դ. 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0.5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (տե՛ս Աղյուսակ 1):

6) Ենթահավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ խորացված ուսուցման առարկաներ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը».

գ. «3» նշագրումը նշանակում է, որ Օտար լեզու 1 ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու 2» առարկան, «Ռուսաց լեզու» առարկան ուսումնասիրում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչով սահմանված ժամաքանակով:

7) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլանով (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 3)՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում ուսպլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկան(երը).

բ. բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ Հոսքային և Ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տնօրինվում է 45-րդ կետի համաձայն.

գ. եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընտրում է մեկ բնագիտական առարկա, ապա 10-րդ դասարանում Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված մնացած բնագիտական առարկաներից մեկը՝ շաբաթական 2 ժամով, ուսումնասիրում է բնագիտական հոսքի հարակից առարկաների ծրագրերով, իսկ մյուս երկու բնագիտական առարկաները՝ այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-12-րդ դասարաններում մեկ բնագիտական առարկայի խորացված ուսուցումը շարունակելու դեպքում, մնացած երկու բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրում է այդ առարկայի՝ բնագիտական հոսքի հարակից առարկայական ծրագրով, իսկ մյուսը՝ այդ առարկայի՝ հումանիտար հոսքի ծրագրով.

դ. եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընտրում է երկու բնագիտական առարկա, ապա Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված բնագիտական առարկաներից մյուս երկուսը 10-րդ դասարանում ուսումնասիրում է այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-12-րդ դասարաններում երկու բնագիտական առարկաների խորացված ուսուցումը շարունակելու դեպքում, մնացած մեկ բնագիտական առարկան ուսումնասիրում է այդ առարկայի՝ հումանիտար հոսքի ծրագրով.

ե. եթե սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է այն առարկաները, որոնց ուսուցման համար ուսպլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչով նույնպես նախատեսված է որոշակի ժամաքանակ, ապա այդ ժամաքանակը տրվում է ուսպլանի դպրոցական բաղադրիչին (բացառությամբ՝ Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում «Մաթեմատիկա» առարկայի ժամաքանակի, քանի որ այդ ժամաքանակը ներառված է «Մաթեմատիկա 1» առարկային հատկացված ժամաքանակում).

զ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով.

է. եթե սովորողը 12-րդ դասարանում ուսումնասիրում է «Օտար լեզու 1» առարկան, ապա չի շարունակում «Օտար լեզու 2» առարկային տրված ժամաքանակի շրջանակում նախատեսված համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը: Ռուսաց լեզուն սովորողն ուսումնասիրում է Ընդհանուր հանրակրթական բաղադրիչով սահմանված ժամաքանակով՝ «Ռուսաց լեզու 2»: Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու 1» առարկան, ապա շարունակում է «Օտար լեզու 2» և «Ռուսաց լեզու 2» առարկաներին տրված ժամաքանակների շրջանակներում նախատեսված համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը.

ը. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել Ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 3):

8) Ենթահավելվածի Աղյուսակ 4-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

9) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլանով (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 4)՝

ա. 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրերով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրերով.

բ. 11-րդ դասարանում սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրով, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրով.

գ. 12-րդ դասարանում բնագիտական առարկաներից սովորողների ուսուցումը շարունակվում է 10-րդ դասարանում՝ նրանց ընտրած բնագիտական հոսքի հարակից առարկայի ծրագրով.

դ. մասնագիտական դասընթացների ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամեր: Ուսպլանի 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ժամաքանակը հատկացվում է ուսումնական պրակտիկայի կազմակերպմանը, պետական պարտադիր առարկաների կրկնությանը և պետական ավարտական քննություններին նախապատրաստմանը.

☞8

ՈՒՍՊԼԱՆ

7 ե. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել Ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (տե՛ս Աղյուսակ 4):

10) Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանով (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 6)՝

ա. Ռուսերենով ուսուցմամբ դպրոցում (դասարանում) «Մայրենի» առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

11) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 7)՝

ա. Ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը.

բ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժհիմնարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ լիազոր մարմնի՝ կրթության բաժնի թույլտվությամբ.

գ. տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն ուսումնական հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը.

դ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուստարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով.

ե. հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ նույն կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական հաստատության կողմից (տե՛ս Ենթահավելվածի Աղյուսակ 7):

2012 թվականի հունիսի 26-ի
N 1051293 Ն հրամանով հաստատված
օրինակելի ուսումնական պլանի
Ենթահավելված

Աղյուսակ 1

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկաները	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխ. աշխատանք	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայաբանություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	2	1	1
Հայոց Եկել եղբս պատմություն	-	-	-	-	1	1	1[1]	1[1]	1[1]	1[1]	1[1]	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Համբարձակ չիլ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆԶՊ և անվտ. կենսագործ.	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	-
Ֆիզկուլտուրա	3	2	3	3	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	-	-	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	3	2	2	2.5	2.5	2.5	2.5	-	2	6.5
Մնացյալը	20	28	20	27	29	31	34	35	35	34	34	34

Ծանոթություն. Ստեփանակերտի Խ.Աբովյանի անվան N 1 հիմնական դպրոցում 3-րդ դասարանում «Շախմատ» առարկային հատկացնել 2 ժամ, ֆիզկուլտուրային՝ 2 ժամ և դպրոցական բաղադրիչին՝ 2 ժամ:

Աղյուսակ 2

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկաները	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հանրակրթական բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխ. պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1	3	3	3
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա	5	5	4
	Ֆիզիկա	4	5	8
	Քիմիա	4	5	8
	Կենսաբանություն	4	5	8
	Աշխարհագրություն	3	5	8
	Հայոց Եկել եղբս պատմություն	2	2	3
	Օտար լեզու	3	5	8
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Մնացյալը		34	34	34

Աղյուսակ 3

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկաները	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հանրակրթական բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն) -1	7	8	8
	Ֆիզիկա - 1	4	5	8
	Քիմիա - 1	4	5	8
	Կենսաբանություն -1	4	5	8
	Աշխարհագրություն -1	3	5	8
	Հայոց լեզու-1	2	2	3
	Օտար լեզու -1[3]	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	4
	Բնագիտական առարկա[2]	2	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Մնացյալը		34	34	34

ՈՒՍՊԼԱՆ

Աղյուսակ 4

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկաներ	Առարկա	Ուսումնական տարվա քանակը		
		X	XI	XII
	Հանրակրթական			
Սահմանադիր ազգի դասընթացներ[1]		9	13	16.5
	Մերձամասնագիտական			
Մերձամասնագիտական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու-1	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և տար. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1	1
	Տնտեսագիտություն	3	3	1.5
	ԵԱՊՀ անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 5

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ I-IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկաներ	Ուսումնական տարվա քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	7	8	8	7	6	–	–	–
Հայոց լեզու	–	–	–	–	–	–	3	2	2
Գրականություն	–	–	–	–	–	–	2	3	3
Ռուսաց լեզու	–	4	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	–	–	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	–	–	–
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	–	–
Վիզուալ արվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	–	–
Եռաչափ աշխատանք	–	1	1	2	–	–	–	–	–
Բնագիտություն	–	–	–	–	2	2	–	–	–
Աշխարհագրություն	–	–	–	–	–	1	1	2	–
Հայաստանի աշխարհագրություն	–	–	–	–	–	–	–	–	2
Հանրաշխարհային պատմություն	–	–	–	–	–	1	1	1	1
Հայոց պատմություն	–	–	–	–	–	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	–	–	–	–	1	1	1[1]	1[1]	1[1]
Հայագիտություն	–	–	–	–	1	–	–	–	–
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	1	1
Հանրահաշիվ	–	–	–	–	–	–	3	3	3
Երկրաչափություն	–	–	–	–	–	–	2	2	2
Ինֆորմատիկա	–	–	–	–	–	1	1	1	1
Ֆիզիկա	–	–	–	–	–	–	2	2	2
Քիմիա	–	–	–	–	–	–	1	2	2
Կենսաբանություն	–	–	–	–	–	–	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	–	–
ԵԱՊՀ անվտ. կենսագործ.	–	–	–	–	–	–	–	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	3	3	3	3	3	3	3
Շախմատ	–	2	–	–	–	–	–	–	–
Դպրոցական բաղադրիչ	–	–	1	1	1	1.5	1.5	1.5	1.5
Ընդամենը	20	24	26	27	29	31	34	35	35

Աղյուսակ 6

ՌՈՒՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ)
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկաներ	Ուսումնական տարվա քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	–	–	–	–	–	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	–	–	–	–	–	–
Հայոց լեզու	–	–	–	–	–	–	3	2	2	2	2	2
Գրականություն	–	–	–	–	–	–	2	2	3	–	–	–
Հայ գրականություն	–	–	–	–	–	–	–	–	–	2	2	2
Օտար լեզու	–	–	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	–	–	–	–	–	–
Հանրահաշիվ	–	–	–	–	–	–	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	–	–	–	–	–	–	2	2	2	1.5	1.5	1.5
Եռ. չափման աշխատանք	–	1	1	2	–	–	–	–	–	–	–	–
Բնագիտություն	–	–	–	–	2	2	–	–	–	–	–	–
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	–	–	–	–	–
Վիզուալ արվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	–	–	–	–	–
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	–	–	–	–	–
Հայաստանի աշխարհագրություն	–	–	–	–	–	–	–	–	2	–	–	–
Աշխարհագրություն	–	–	–	–	–	1	1	2	–	1.5	1	1
Հանրակրթական	–	–	–	–	1	–	–	–	–	–	–	–
Հայոց պատմություն	–	–	–	–	–	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմ.	–	–	–	–	–	1	1	1	1	1.5	1	1
Հայոց Եկեղեցու պատմություն	–	–	–	–	1	1	1[1]	1[1]	1[1]	–	–	–
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	–	–	–	–	–	–	2	2	2	3	3	3
Քիմիա	–	–	–	–	–	–	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	–	–	–	–	–	–	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	–	–	–	–	–	1	1	1	1	1	1	1
ԵԱՊՀ անվտ. կենսագործ.	–	–	–	–	–	–	–	1	1	1	1	–
Ֆիզկուլտուրա	3	2	3	3	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	–	2	–	–	–	–	–	–	–	–	–	–
Դպրոցական բաղադրիչ	–	1	1	1	–	1.5	1.5	1.5	2	–	0.5	3.5
Ընդամենը	20	24	20	27	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 7

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկաներ	Ուսումնական տարվա քանակը											
	Տարրական դպրոց				Միջնակարգ					Ավագ դպրոց		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	–	–	–	–	–	–
Հայոց լեզու և գրակ.	–	–	–	–	–	–	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	–	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	–	–	1	1	1	1	1	1	1	1	1	1
Եռ. չափման աշխատանք	–	0.5	0.5	0.5	–	–	–	–	–	–	–	–
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	–	–	–	–	–	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմ.	–	–	–	–	–	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	0,5	0,5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	–	–	–	–	–	–	0.5	0.5	0.5	1	1	1
Քիմիա	–	–	–	–	–	–	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	–	–	–	–	0.5	0.5	–	–	–	–	–	–
Կենսաբանություն	–	–	–	–	–	–	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	–	–	–	–	–	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՈՒԽՏԱԳՆԱՃՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Ճակատագիր՝ հայի ճակատագիր... Զարմանալի սարսռազդու ու ողբերգական, որ բերում է իր հայրենիք ուխտավորի՛ տեսքով՝ հար կարոտած ու սիրառատ, չարաճճի ու պրպտող, անհանգիստ, միշտ որոնող, իր սեփական նեղ շավիղը հարթող-հղկող աշակերտի՛ տեսքով...

Որոնումներ, տարիքային սլացումներ ու բացառիկ պարզ լուծումներ... Այս բառերով կարելի է բնութագրել նոր սերնդի ձևավորվելու և կայանալու յուրաքանչյուր փորձ, ամեն մի ակնթարթ, մտքի թռիչքն ու անհնարինը հնարավոր դարձնելու նրա ջիղն ու կամքը, նպատակն ու արյան կանչը: Սերունդ, որ փորձում է պեղել ազգայինի ականակիտ ակունքներն ու հասնել քաղաքակիրթ ժողովուրդների նվաճած արժեքներին, պահպանել իր դիմագիծն ու հետ չմնալ համամարդկայինից, արժևորել իր նշխար-մասունքներն ու չձուլվել օտարի ձգող-կանչող էությանը...

Արտադասարանական աշխատանքի էքսկուրսիայի ձևը նորույթ չէ դաստիարակության գործընթացում: Հարազատ հողն ու ջուրը, սրբություն դարձած լեռներն ու ձորերը, պատմական փաստերն ու անձինք ավելի են նշանավորվում, երբ ակնառու փաստ են դառնում երեխայի համար:

Հունիսի սկզբին ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 10-րդ «բ» դասարանի աշակերտները կազմակերպեցին ուխտագնացություն դեպի մայր Հայաստան:

Կրթօջախի տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Սուսաննա Ներսիսյանն իր բարեմաղթանքն ու օժանդակությունն է ցուցաբերել երեխաների մտահղացման իրականացմանը: Նրա օգնությամբ աշակերտները երեք օր հանգրվանել են Երևանի ֆիզմաթ դպրոցի հանրակացարանում, որի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում և՛ նրան, և՛ Երևանի ֆիզմաթ դպրոցի տնօրեն Հայկազ Նավասարդյանին:

Այդ ճամփորդություն-ուխտագնացությանն իրենց օգնությունն ու հովանավորությունն են ցուցաբերել նաև «Արցախէներգո» ՓԲԸ-ն, ծնողներ Էդիկ Աբրահամյանը, Արթուր Բալայանը և Արտավազդ Սարգսյանը:

Հունիսի 3-ին՝ վաղ առավոտյան, արեգակի առաջին ճառագայթների ուղեկցությամբ 10-րդ «բ» դասարանի աշակերտ-աշակերտուհիները հավաքվեցին Ազատության հրապարակում: Բոլորի աչքերում ժպիտ ու խինդ կար, բերկրանք ու երջանկություն... Ճանապարհվեցինք: Մեր երթուղին արդեն կանխորոշված էր. առաջին կանգառը Բերձորի եկեղեցին էր: Այն կառուցվել է Շուշիի ազատագրումից հետո, երբ բացվեց Մայր Հայաստանին միացնող կյանքի ճանապարհը: Մոմեր վառեցինք, տերունական աղոթքը գրաբար մրմնջացինք խմբովին ու կարծես ստանալով աստվածային օրհնությունն ու բարեմաղթանքը՝ նոր ոգով շարունակեցինք մեր եռօրյա արշավի առաջին օրվա ոգեշունչ ուղին:

Հաջորդ կանգառը մբնաձորյան Գորիսն էր՝ Զանգեզուր աշխարհի թպրտացող սիրտը՝ Բակունցի շնչով անմահացած և նոր իմաստ ու երանգ ստացած Կյորեսը: Առեղծված էր և է մեզ համար Բակունց մարդն ու արվեստագետը. մենք փորձեցինք մեկ անգամ ևս ծանոթանալ նրա աշխարհի մասունքներին ու նշխարներին:

Տուն-թանգարանում տեսանք Մարտիրոս Սարյանի կերտած Բակունցի մեծադիր նկարը, կահ-կարասին, ձեռագրերը, անձնական օգտագործման իրերը. նահապետական հայ գյուղացու կենցաղն իր ողջ էությամբ հառնեց դեմներս՝ պարզ ու անպաճույճ, անեղծ ու անբասիր...

Անկախ մեզնից, բոլորիս հոգուն թառել էր մի տխրաթախիծ զգացում՝ կորստի ցավը. բակունցյան կորստի անամոք կսկիծը պարուրել էր մեր ներաշխարհը:

Տպավորությունն անջնջելի էր, ես հասել էի իմ նպատակին. Բակունցն արդեն երեխաների հոգում իր ուրույն տեղն ուներ՝ անհասանելի ու անմատչելի, ինչպես Կաքավաբերդի ալպիական մանուշակը, զուլալ՝ ինչպես Դիլան դային ու մոխիրների տակ թաղված նրա անմար սերը: Երեխաները, հիրավի, նորովի ընկալեցին ու իմաստավորեցին «Բակունցյան Զանգեզուր» արտահայտությունը:

Հաջորդ մեկնակետը Պարույր Սևակի տուն-թանգարանն էր: Թանգարանն, իրոք, նորակառույց շենք էր, ճանապարհը՝ հարթ: Ամեն ինչ կար այնտեղ՝ և՛ ձեռագրեր, և՛ նամակներ, և՛ անտիպ տողեր, նկարներ, ժողովածուներ, անձնական իրեր: Չգիտես ինչու, գերեզմանաքարն ավելի հուզեց երեխաներին. այդտեղ մենք զգացինք սևակյան շունչն ու նրա անտես ներկայությունը: Աշակերտներն ասմունքեցին (նախօրոք հանձնարարել էի), լռեցին մի պահ...

Քիչ այն կողմ գտնվում էին Սևակի ծնողների գերեզմանները՝ անշուք հուշաքարերով: Տխրաթախիծ տեսք ուներ նաև անձամբ Սևակի ձեռքով կառուցված առանձնատունը, որին չքողեցին մոտենալ: Մոլախոտով էր պատած երկհարկանի տունը, ուր զգացվում էր Սևակի ջլուտ ու աշխատասեր ձեռքի պակասը...

Չանախչի-Ճանգակատուն գյուղից հետո մենք կանգ առանք վթարի վայրում կառուցված հուշաքարի մոտ: Խենթանալ կարելի է. հարթ ու լայն ճանապարհին ո՞նց վթարվեց նրա մեքենան: Այդ նույն հարցը թևակոտոր թռչունի արյունոտ թևի պես թևածում էր նաև երեխաների մտքում՝ դառնալով կրքոտ վիճաբանության և կարծիքների բուռն քննարկումների կիզակետ:

Նախօրոք գիտեինք, որ պետք է այցելեինք Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան ու այցելեցինք: Երանի՜ յուրաքանչյուր դասարան ու դասղեկ կարողանար գոնե մեկ անգամ լինել այնտեղ, ուր կա հերոսական ոգի, պայքարի փառավոր ուղի ու հայրենիքի երկրապահ մարտիկի՝ Սպարապետի անմնացորդ նվիրման անթիվ էջեր... Բազում շքանշաններն ու նկարները, զենքերն ու նվերները, նրա կյանքի ուղին ներկայացնող իրերն ու ձեռագրերը հիացրել էին բոլորիս: Թանգարանում թևածում էր Վազգեն Սարգսյանի ոգին, շունչը, էությունը: Անջնջելի, անմոռաց զգացումներով պարուրված, հեռացանք՝ մեր հոգում ունենալով Սպարապետի վեհ կերպարը...

Առաջին օրվա կիզակետային պահերից մեկն էլ այցելությունն էր Խոր Վիրապի հնամենի եկեղեցին, Մասիսների վեհափառ հայացքի ներքո մտորելն ու վեհանալը: Խոր Վիրապում ականատես եղանք հարսանեկան ծիսակատարության. մենք էլ կարծես հարսանքավորներ դարձանք: Մի հայ ընտանիք էլ էր ստեղծվում՝ Արարատի հպարտ հայացքի օրհնությանն արժանացած:

Երեխաներն իջան այն փոսը, ուր երկար տարիներ մի կանանակով ու մի շիշ ջրով տառապանքին ու խոշտանգումներին դիմակայել էր Գրիգոր Լուսավորիչը:

Հոգնած երկար ճանապարհից ու արևի կիզիչ ճառագայթներից, հուզառատ տպավորություններով հարստացած, դժվար երթուղի ոգեղեն սնունդով կերտած՝ երեխաները հասան Երևանի ֆիզմաթ դպրոց:

Դպրոցի տնօրեն Հայկազ Նավասարդյանի հյուրընկալ վերաբերմունքն ու երեխաների հետ սրտաբաց զրույցը թոթափեցին ճանապարհի հոգնությունը, և նրանք նոր եռանդով սկսեցին երկրորդ օրվա՝ կանխավ սահմանված այցերը՝ էջմիածին, Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր, Մատենադարան, «Մայր Հայաստան» հուշակոթողը, հրապարակ՝ երգողպարող շատրվաններով:

Վերադարձի առավոտյան հրաժեշտ տալով տնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գևորգ Թամարյանին՝ երեխաները չէին ուզում հեռանալ քաղաքամայր Երևանից:

Բայց մենք պիտի այցելեինք Օշական՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի մատուռ, տեսնեինք տուֆակերտ քարեղեն այբուբենը բաց երկնքի տակ ու ճանապարհվեցինք...

Եղանք նաև Լոռու Դսեղ գյուղում, վայելեցինք Դեբեդ գետի վշշոցն ու հմայքը: Ամենայն հայոց բանաստեղծի տուն-թանգարանում նոր անակնկալներ էին սպասում մեզ՝ 300 մեծարժեք ցուցանմուշներ, իսկ Լոռու անդնդախոր ձորերն ու թավ անտառները մեզ հիշեցրին Արցախ աշխարհի անձեռակերտ բնությունը:

Եղանք Վանաձորում, ուր հայկական ավանդական հյուրասիրությամբ՝ խորովածով, մրգերով ու տարբեր ուտեստներով ծանրաբեռնված սեղանի շուրջ «Այգ» ռեստորանային համալիրում մեզ էր սպասում մեր աշակերտուհիներից մեկի՝ Նադյա Բալայանի քեռին՝ Վանաձորի քաղաքապետարանի կոմունալ բաժնի պետ Լյովա Մելիքյանը: Կեսօրից հետո մեր շնորհակալությունը հայտնելով հյուրամեծար վանաձորցուն՝ ուղևորվեցինք դեպի Գեղամա լեռների գոգում ծվարած մեր փիրուզ դիցուհին՝ Սևանը, ուր եղանք եկեղեցում, մոմեր վառեցինք և հոգնած ու լիացած բռնեցինք ետդարձի ուղին՝ Սելիմի լեռնանցքով, 2 կմ ձգվող զարմանահրաշ թունելով...

Մեր եռօրյա ուխտագնացության ուղեկիցներն էին 10-րդ «բ» դասարանի նախկին դասղեկ Շուշան Սարգսյանը և մեքենայի վարորդ Բորիս Բալուղյանը:

Ամփոփելով վերը նշվածը՝ ուզում եմ նշել, որ Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցը՝ ի դեմս տնօրեն Սուսաննա Ներսիսյանի, իրագործում է մի պարզ իմաստություն. այսօրը կերտում է վաղը, այսօրվա սերմնահատիկն ապագայի հունդն է ու գալիքի բերքը...

Նուբար ՊՈՂՈՍՅԱՆ
ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի ՄԿԱԳ տնօրենի տեղակալ

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ

ԱՆՎԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Պատահում է, հարկադրված կամ հետաքրքրությունից դրդված՝ կարդում ես այս կամ այն գիրքը ու երբ ավարտում-վերջացնում ես, քո կամքից անկախ, խորը շունչ ես քաշում ու գրեթե լսելի ձայնով շշնջում. «Ափսո՜ս, շա՜տ ափսոս, որ էնքան ժամանակ կորցրի...

Լինում է և հակառակը: Մի քանի էջ կարդում, առաջ ես գնում ու այլևս պոկ գալ չես ուզում:

Այդպես էլ է լինում: Վերցրեք կարդացեք Ժորա Գրիգորյանի «Ուլուբաբը» (խմբագիր՝ Ժաննա Բեգլարյան, Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն, 2011թ. 114 էջ) ու կհամոզվեք, որ հիրավի, հետաքրքիր գիրք է:

Գիրքը, ինչպես ինքը՝ հեղինակն է ասում, գրվել է հարազատ օջախը թողած համագյուղացիներին գյուղ վերադարձնելու նպատակով:

«Վերականգնենք մեծ պատմություն ունեցող Ուլուբաբը, հայրենի գյուղ վերադարձնենք քաջ ուլուբաբցիներին՝ աշխարհում ցրված ժառանգներին, որ մեր հանգստարանները, մեր հարուստ բնությունը, մեր Պտկես Բերքը, մեր աղբյուրները անտեր-անտիրական չմնան, անհետ չկորչեն»,- կարդում ենք 83-րդ էջում:

Հեղինակը վկայակոչում է մեր մեծանուն պատմաբան Լեոյին, որը գրել է. «Ուլուբաբը Արցախի ամենահին գյուղերից մեկն է»: (Փակագծերում ասենք, որ այս բառը ծագել է Հասան-Ջալալյան տոհմի անահ ու կորովի ներկայացուցիչներից մեկի՝ Ուլուի, Ուլուպապի անունից, որն իր որդիներով ու թոռներով հիմք է դրել բնակատեղիին):

Ամենահին այս բնակավայրի, հայրենի օրրանի ճակատագիրը տարիներ, տասնամյակներ շարունակ մտահոգել, հանգիստ չի տվել գրքի հեղինակին: Գոհունակությամբ շեշտենք, որ նա նույնիսկ բաց նամակով դիմել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին (պատճենը՝ ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանին):

Նրանում (նամակում) կան այսպիսի տողեր. «Հարգելի վարչապետ, կոլտնտեսությունների խոշորացման սխալ քաղաքականության հետևանքով և էլի ուրիշ պատճառներով 1980թ. երկրի երեսից լրիվ վերացավ Արցախի ամենահին, հարուստ ու բազմաչարչար պատմություն ունեցող գյուղը՝ Ուլուբաբը:

...1938թ. վերջինս Արցախի ամենահարուստ գյուղն էր: Նրա հարուստ պատմության մասին գիրքը հանձնված է տպագրության Շահեն Մկրտչյանի խմբագրությամբ: Գրքի հիմնական նպատակն այն է, որ ինձ օգնի՝ պատմական հայրենի գյուղս վերադարձնելու տարագիր դարձած ուլուբաբցիներին:

...Խնդրում եմ օգնեք նշանավոր Ուլուբաբի՝ Բագրատ Ուլուբաբյանի գյուղի վերականգնման գործին: Ինձ մոտ է գտնվում ավելի քան 10 ընտանիքների ցուցակը, որոնք ցանկանում են վերաբնակեցնել հայրենի գյուղը»:

Այս բառերն ինքնին շատ բան են ասում, և թվում է, ընթերցողը որոշակի պատկերացում է կազմում հեղինակի հակումների, հետաքրքրությունների, խոհերի ու մտորումների, մտադրությունների ու երազանքների մասին ու ասես պարզորոշ տեսնում նրա՝ հանրապետությունում բոլորի կողմից հարգված ու ճանաչված, 80-ը նոր բոլորած, վաստակաշատ մանկավարժ, «Արցախի վայրի բույսերը կենցաղում», «Կենսաբանության խնդիրների լուծման մեթոդները», «Կենսաբանությունը առօրյա կյանքում» գրքերը: Այս վերջինում կան օգտակար խորհուրդներ, դեղատոմսեր, որոնք քաղված են ժողովրդական բժշկությունից:

Չենք խոսում սիրով ու ավյունով գրված տասնյակ ու տասնյակ ուշագրավ հոդվածների, ակնարկների մասին, որոնցում այնքա՜ն պարզ ու շիտակ, ջերմ ու հստակ խոսք կա նախկին գործընկերների, կրթության համակարգի առջև ծառացած խնդիրների, Արցախ աշխարհի գեղատեսիլ վայրերի, ծննդավայրի մարդկանց աշխատասիրության, առաքինության մասին: Ասել է թե՝ նա ո՛չ միայն լավ ուսուցիչ է, այլև ակտիվ կենսադիրքի տեր քաղաքացի:

Չշեղվենք ու դառնանք բուն թեմային՝ նոր լույս տեսած «Ուլուբաբին», որը գրելու համար օգտագործել է նաև տարեց համագյուղացիների (Շամիր Պետրոսյան, Օհան Ավանեսյան, Արսեն Ստեփանյան, ուրիշներ) բանավոր պատումները:

Շեշտենք ամենակարևորը. ասելիք ունի հարգարժան մանկավարժը և այդ ասելիքն ընթերցողի սրտին ու մտքին հասցնելու ձիրք ու շնորհք: Զարմանալի չէ, որ բնության տեսարժան վայրերի, վանքերի, եկեղեցիների, ժայռերի և, ընդհանրապես, առօրյա կյանքի նկարագրություններն այնքա՜ն տպավորիչ են, այնքան բնական...

Ավելին, առանձին էջեր, պարբերություններ, կարծես աննկատ, կամացուկ հուշում են ընթերցողին, որ անուն հանած կենսաբանն անգիր գիտի ու ճանաչում է հայրենի եզերքի ամեն մի ծառ, ամեն մի քար, թուփ ու վրան.

«Ով այցելում է Ուլուբաբ, սկզբում դիտում է նրա գեղեցկությունները: Սուրբ Գևորգ անտառում բարձր սարը՝ գագաթի հոյակապ վանքով՝ Պտկի Ս. Գևորգ վանքը: Գյուղի հյուսիսային կողմում գտնվող այդ գեղեցիկ սարը մի արտակարգ գեղեցկություն է տալիս Ուլուբաբին: Սարի արևմտյան կողմում աճում են սլացիկ հաճարենիներ և ընկուզենիներ, հյուսիսային երեսին՝ վայրի տանձենիներ, խնձորենիներ, ալոճենիներ և այլ ծառեր ու թփեր: Գյուղի արևելյան կողմում՝ 10 հեկտարից ավելի վայրի տանձենիների անտառ-այգի է: Հաճելի է այդ այգին դիտել գարնանը, երբ ծառերը ծաղկում են և աշնանը, երբ նրանք օրորվում են պտուղների ծանրության տակ»:

Կարդում ես այս տողերը ու հոգու աչքերով տեսնում, զգում, խորապես համոզվում, որ մանկավարժ գրողը ոչ միայն սիրում, այլև պաշտում է իր ծննդավայրը, հպարտանում նրանով, երեխայի նման պարծենում, գովում, մեծարում համագյուղացիներին՝ վերջիններիս համարելով գեղեցկության տիպարներ, բարության սերմնացաններ, ասպետներ, դյուցազուններ:

- Աշխատանքը կոլտնտեսությունում համարվում էր փառք, պատիվ, երջանկություն: Նվիրված աշխատում էին, լավ վարձատրվում: Ամեն ընտանիքում հինգից պակաս երեխա չկար: Ինչքա՜ն խելոք տղաներ կային գյուղում, ինչքա՜ն էին գեղեցիկ մեր գյուղի աղջիկները: Այս բոլորը նրանից էր, որ մարդիկ սնվում էին էկոլոգիապես մաքուր, թարմ մթերքներով:

Նշենք, որ չթուլացող հետաքրքրությամբ են կարդացվում «Բարերարների գերդաստանը», «Կյանքը Խաչենի հովտում», «Կենդանացնենք Ուլուբաբը» խորագրերի տակ զետեղված նյութերը, կոլտնտեսությունների խոշորացման հետևանքների մասին խելամիտ դատողությունները, Մեծ Հայրենականի տարիներին (մարտի դաշտում ու թիկունքում) ուլուբաբցիների անօրինակ սխրանքին, հայրենանվեր աշխատանքին նվիրված հուզիչ ու սրտամոտ տողերը:

1941-ի հենց առաջին օրերին 59 ուլուբաբցիներ զինվորի շինել են հագել, մարտնչել Կիևի, Մինսկի, Մոսկվայի մատույցներում ու շա՜տ հեռուներում՝ անուններն իրենց պսակելով հերոսի փառքով: Տարաբախտաբար, նրանցից 21-ը տուն չի դարձել:

Ասել կուզի՝ պատերազմը շատ բան է փոխել ուլուբաբցիների կյանքում ու կենցաղում, պատճառ դարձել նրանց հոգեբանության ու մտածողության գունատմանը:

Եվ ի՞նչ:

«70-ականների վերջերին,- գրում է հեղինակը,- գյուղում մի ընտանիք էլ չմնաց: 365 բնակիչները ցրվեցին աշխարհով մեկ ու դարձան տարագիրներ»:

Ցավալի երևույթ:

Բայց ուր էլ գնացել, իրենց դիմագիծը չեն կորցրել, իրենց հողն ու ջուրը, իրենց օջախը չեն մոռացել: Ի դեպ, ամեն տարի մայիսի 2-ին աշխարհի տարբեր ծագերից տասնյակ ուլուբաբցիներ գալիս են հայրենի գյուղ, դիտում հողին հավասարեցված իրենց տնատեղերը, արցունքոտ աչքերով հավաքվում Հայրենական պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին կառուցված հուշարձանի մոտ, տխրում, արտասվում, ապա խմբվում եկեղեցու առջև ու բոլորը միասին երդում տալիս Պտկես բերքին, վանքին. «Մենք գնում ենք, բայց վերադառնալու ենք, քեզ անտեր-անտիրական չենք թողնելու...»:

Թերևս այս ուրախալի երևույթը նկատի ունի հեղինակը, երբ ասում է՝ մեկ է, այդ տարագիրները մի օր նորից կհավաքվեն Խաչենի աջ կողմում գտնվող իրենց առաջին գյուղատեղիում:

Այո՛, հիմքեր կան այսպես ասելու, այսպես մտածելու: Տեղն է նշել, որ հարգարժան մանկավարժը, գրողն ընդգծված հարգանքով, ակնածանքով է խոսում Հասան-Ջալալյանների տոհմից սերված և հարուստ գեներով օժտված սերունդների, ազգանվեր անհատականությունների, անցած-գնացած հսկաների, վաղուց արդեն մեծ համբավ ու անուն ձեռք բերած բարերարների, Բարում, Սարգիս, Պերճ, Բալում, Շամիր Պետրոսյան, Բագրատ Ուլուբաբյան և վերջապես, Լևոն Հայրապետյան, ուրիշներ: Հիշեցնենք, որ վերջինիս ջանքերի ու նվիրատվությունների շնորհիվ նոր տեսք են ստացել Վանքը, Գանձասարը, Դուքանները: Նաև հավելենք, որ նրա միջոցներով անցկացված «Մեծ հարսանիքը» աննախադեպ երևույթ էր ոչ միայն արցախցու կյանքում, այլև աշխարհի բոլոր ժողովուրդների համար:

Պատեհ առիթը բաց չթողնենք և ուրախությամբ նշենք, որ հեղինակը մի յուրահատուկ ջերմությամբ, սիրով ու կարոտով է խոսում գիր ու գրականության, մեր դպրության հունդերը տարածած առաջին վարժապետի՝ Սաշա Յուզբաշյանի (1923թ.) և հետագա տարիներին դպրոց ոտք դրած ու իրենց ողջ էությամբ սաների կրթության, դաստիարակության գործին նվիրված ուսուցիչների՝ Աշխեն Ջալալյանի, Անդրանիկ Մկրտումյանի, Արմո Արամյանի, Աստղիկ Աբրահամյանի, 90-ամյա Ասլան Հովսեփյանի, շատերի մասին:

Ամփոփենք. Ժորա Գրիգորյանը գրիչ ունի ու մեծ ասելիք: Նաև՝ խելացի դատելու, տրամաբանելու ունակություն, կարողություն: Այս եզրակացությանն ես հանգում՝ կարդալով «Ուլուբաբը»: Արժե հիշեցնել, որ այդ մեծ ասելիքից հույժ կարևոր մի միտք խտացված, ամբողջացված ձևով, գունեղ տեսքով տեղ է գտել գրքի 72-րդ էջում, որտեղ նա իր խոհերը, մտորումներն է արտահայտում Արցախյան հարցի մասին՝ ընդհանրապես և մեր «հարևանների» մասին՝ մասնավորապես: Մեջբերենք մի պարբերություն.

«Հարևանները նրա համար են, որ կյանքում իրար օգնեն, ինչպես Արցախում են ասում, «մեկը մյուսի հրեյին հասնեն»: Ամբողջ կյանքի ընթացքում մենք մեր հարևան թուրքերից մի լավ բան չտեսանք. միայն կռիվ, կոտորած, գաղթ, ջարդեր: Թևակոխել ենք 21-րդ դարը, բայց նշված երևույթները դեռ կան: Թուրքերի տված վնասը մեր ազգին՝ հսկայական չափերի է հասնում: Նրանք միայն հայերին չեն վնաս տվել: Նրանց տված վնասը մեծ է ողջ աշխարհի մասշտաբով...»:

Պարզ, անպաճույճ բառեր, որ իրենց մեջ խորը, շա՜տ խորը մտքեր են պարունակում: Հասկացողի համար, իհարկե:

«Ուլուբաբի» մասին կարելի է երկար խոսել: Բավարարվենք՝ հիշելով ու հիշեցնելով գրքի վերջին տողերը. «Ուլուբաբի վերականգնելն ունի բացառիկ կարևոր գիտական և պատմական նշանակություն: Նրա հին գյուղատեղիները և քարանձավները հստակ ցույց են տալիս, թե Արցախի հայերն ինչքան խոր և երկար արմատներ ունեն...»: Սրանով ավարտում եմ իմ ասելիքը՝ խորհուրդ տալով ընթերցողին՝ անպայման կարդալ այս օգտակար գիրքը, այս լավ գիրքը:

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐՈՔ, ՀԱՃԵԼԻ ԷՐ, ԱՆՑՆՑԵԼԻ

Բոլորովին վերջերս Մեծ Թաղերի մարշալ Արմենակ Խանփերյանցի (Սերգեյ Խուդյակով) անվան միջնակարգ դպրոցի 7-րդ ու 11-րդ դասարանների աշակերտները (թվով՝ 29 հոգի) իրենց դասղեկների ուղեկցությամբ եղան Գտիչ վանքում, սրբատաշ տորոնագույն քարերով ու բարձր արվեստով կերտված հոյակապ մի կոթողում, որը գտնվում է Տողա սարի հյուսիսահայաց փեշերին: Վանքը կառուցվել է 1241-1248թթ., Ամարասի միաբանությունից եկած Տեր Սարգսի և Տեր Վրթանեսի կողմից՝ անասելի դժվարին պայմաններում, երբ մոնղոլ-թաթարների կողմից կործանվել էր Ամարասը և ավերվել երկիրը: Աշակերտները հետաքրքրությամբ դիտեցին շրջակայքը (ի դեպ, այստեղ այժմ նորոգման, վերակառուցման աշխատանքներ են տարվում), նայեցին, տառ-տառ կարդացին պատերին փորագրված արձանագրությունները, հիացան գեղաքանդակ խաչքարերով, հայ մարդու մտքի խոյանքով, դարեր շարունակ շատերի ուշադրությունն իր վրա հրավիրած ճարտարապետական այս եզակի նմուշով:

Հիշեցնենք, որ վանքը հայտնի է վաղ միջնադարից և եղել է Արցախ նահանգի Դիզակ գավառի եպիսկոպոսանիստը ու երկրամասի մշակութային գլխավոր կենտրոններից մեկը: Մոմավառությունից ու տերունական աղոթքից հետո, որ կատարեցին (ուխտավորները) խմբովին, հայոց եկեղեցու պատմության երիտասարդ ուսուցչուհի Կարինե Չաքմազյանը (7-ի դասղեկն է) մանրամասն ներկայացրեց վանքի հերոսական անցյալը, նշեց, որ մի ամբողջ տարի Եսայի Աբու-Մուսեն այս բարձր լեռներում դիմադրել է արաբ զորավար Բուղային: Դեռ ավելին, ռազմական ակնհայտ տաղանդի շնորհիվ ետ է գրավել իր և քեռու՝ Աբսալադի տիրույթները: Ապա, առաջ տանելով իր խոսքը, ուսուցչուհին ասաց.

- Արևմուտքում հայերի հետ հաշիվները մաքրած Բուղա ոստիկանը 853թ. կռիվները տեղափոխեց Սյունիք, որը նվաճվեց գարնանը: Նա հերթով, մեկը մյուսի հետևից գրավեց Պարտավը, Գարդմանքը, Ուտյաց աշխարհը և բոլորին հպատակեցրեց:

Եսայի Աբու-Մուսեն, որ վերևներում նշված գավառներում իրերի դրության տերն էր, զգալով մոտեցող վտանգը և առավել հուսալի համարելով Գտիչ (Քթիչ) բերդը, սկսեց ամրացնել այն և շուրջ մեկ տարի այնտեղ գամեց արաբական աշխարհակալության 200-հազարանոց բանակի ողջ կարողությունը: Երբ Բուղան տեղեկացավ, թե ինչպիսի պատրաստություն է տեսել Թեշաբերդում Դիզակի քաջարի իշխանը, իրեն հատուկ ամբարտավանությամբ սկզբում կոչ արեց խաղաղաբար հպատակվել: Սակայն այդպես չեղավ: «Երիցու որդին» մերժում է Բուղային սպառնական տոնով գրված մի պատասխանով.

«...Եվ արդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը, և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ Տեր Աստծո ուժով ու զորությամբ և քեզ տեսնելու եմ ո՛չ սիրով ու խաղաղությամբ, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով: Եվ եթե դու ցանկանում ես ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ե՛լ այստեղից և գնա իմ (երկրի) սահմաններից»:

Թեշաբերդի վրա առաջին հարձակման պահից, երբ Բուղան տեսավ, թե ինչպես են հայ զինվորները, ամենքն իրենց տեղը բռնած, ետ վանում արաբների առաջխաղացումը, համոզվեց, որ Աբու-Մուսեի գրածները դատարկ հոխորտանքներ չէին և կորուստներից խուսափելու համար հրամայեց նահանջի փող հնչեցնել...

Այսպես ոգևորված պատմում էր ուսուցչուհին, և նրա շուրջը հավաքված պատանիներն ու աղջիկները մտովի պատկերացնում, հոգու աչքերով տեսնում էին գոռոզ արաբ բռնակալի սպառնալիքները և անահ հայ իշխանի՝ Աբու-Մուսեի արժանի պատասխանն ու լեռնցուն վայել անօրինակ քաջությունը:

Էքսկուրսանտները շատ երկար մնացին Գտչավանքում: Իրիկնադեմին, երբ հունիսյան կիզիչ արևը թաքնվեց երկինք խոյացած սարերի ետևում, ու մի խորհրդավոր լռություն իջավ խոր անտառի ու անդնդախոր ձորերի վրա, նրանք բռնեցին տունդարձի ճանապարհը՝ չմոռանալով ուսուցչուհու՝ Նունե Օհանջանյանի հրահանգով ու խորհրդով նորից մոմեր վառել պատմական հինավուրց կոթողում ու աղոթքի խոսքեր մրմնջալ առ Աստված:

Բնական է, մի քիչ հոգնել էին (ոտքով էին գնացել), բայց բոլորը տոնական տրամադրություն ունեին: Անչափ ուրախ էին, որ տեսել էին դարերից եկող ու դարերի հետ խոսող պատմական կոթողը: Ամենակարևորը՝ տեսել ու համոզվել էին, որ մեր նախնիները, հիրավի, հերոսական ջանքերով ու մաքառումներով են պահել, պաշտպանել կոթող-վանքերը, ամրոց-բերդերը:

Օրեր են անցել, բայց պատանի ուխտավորները դեռ շարունակում են փոքր-ինչ հուզված ու ոգևորված տեսածով, լսածով՝ պատմել, զրուցել էքսկուրսիայի մասին: Տպավորությունը հաճելի էր ու անջնջելի:

Մ. ԲԱԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԻՐ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Ուսուցիչն այն անձնավորությունն է, ով սրտի մղումով մանուկների աշխարհն է մտնում, նրանց իսկ պարգևած թևերով նետվում տիեզերք, որ վերադարձին իր հետ լույս բերի մանուկների սիրտն ու միտքը լուսավորելու համար: Նա է մանկան դեռևս անմշակ հոգին վերածում բազմաբեղուն պարտեզի: Նա է, որ չի պատկերացնում իր կյանքն առանց իր սիրելի գործի և առավել սիրելի սաների:

Լևոն Առաքելյանը մեկն է այն բյուրավոր երախտավորներից, ով ամբողջ էությամբ նվիրվեց այդ վեհ ու սրբազան գործին:

Ծնվել է 1952թ. մայիսի 24-ին, Մարտունու շրջանի Եմիշճան գյուղում: Ավարտելով Եմիշճանի 8-ամյա և Բերդաշենի միջնակարգ դպրոցները՝ 1970թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ և 1977-ին ավարտել այն: 1975 թվականից առայսօր աշխատում է Եմիշճանի հիմնական դպրոցում. 1984-1999թ.՝ տնօրենի, 2000-2002թթ.՝ փոխտնօրենի պաշտոններով: Տնօրենի պաշտոնում աշխատելու տարիներին հիմնովին փոխել է դպրոցի կահույքը, երկու անգամ հիմնանորոգել դպրոցի շենքը, կառուցել օժանդակ շինություններ, ձեռք բերել զգալի տեխնիկական միջոցներ, նյութեր, սարքավորումներ քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների համար:

Արցախյան գոյապայքարի առաջին օրերից մինչև նրա հաղթական ավարտն ակտիվորեն մասնակցել է ռազմական գործողություններին, վիրավորվել է 1993թ. հունիսի 12-ին՝ Մարգիլլուի համար մղված մարտի ժամանակ: Պարգևատրվել է ՀՀ և ԼՂՀ «Մարտական ծառայություն», «Հայրենյաց պաշտպան», «Ստեփան Շահումյան» մեդալներով: 1973 թվականից ներգրավվել է հասարակական աշխատանքի մեջ, եղել է տեղամասային կոմերիտական, կուսակցական կազմակերպությունների քարտուղար, արհմիության նախագահ, «Գիտելիք» ընկերության նախագահ, պրոպագանդիստ, քաղպաշտպանության շտաբի պետ: Այժմ ԱԱՄ տարածքային կազմակերպության նախագահն է (կազմակերպության ստեղծման պահից): 1973-ից կապված է շրջանային, մարզային, հանրապետական թերթերին: Հանդես է գալիս տարաբնույթ թեմաներով՝ ինչպես մանկավարժական, այնպես էլ մեր ժողովրդի առօրյա կյանքի հիմնախնդիրներին վերաբերող հարցերով:

Լևոն Առաքելյանը վայելում է համագյուղացիների, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների սերն ու հարգանքը: Աշխատանքային գործունեության տարիներին նա իրեն դրսևորել է որպես իր գործի հմուտ գիտակ: Տարիների հեռուներից հետադարձ հայացք ձգելով իր անցած ճանապարհին՝ հպարտություն ու բերկրանք է ապրում Լևոն Առաքելյանը, որովհետև հստակ տեսնում է իր ստեղծածի ուժն ու կարողությունը:

Եմիշճանի հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվը սիրով ու ջերմությամբ շնորհավորում է Լևոն Առաքելյանին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, ցանկանում ստեղծագործական նորանոր հաջողություններ, առողջություն, կորով՝ իր սաների սրտում խիզախությունների ու հերոսության նոր կայծեր վառելու:

Եմիշճանի Վ. Աբրահամյանի անվան
հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

Խմբագրության կողմից.- «Լուսարար» թերթի խմբագրակազմը սիրով միանում է թերթի ակտիվ թղթակից վաստակաշատ մանկավարժի հոբելյանի առթիվ հղված շնորհավորանքին:

ԱՆՀԱՆԳԻՍՏ ՈՒ ՊՐՊՏՈՂ

Ուսուցիչը կյանքի հիմնասյունն է: Ուսուցիչը կառուցում է երեխայի հոգին, ձևավորում նրա էությունը, իր մեջ ամբարած մտավոր հարստությունը կաթիլ-կաթիլ փոխանցում երեխային, թևավորելով և ճախր տալով նրան, իր հոգու ու մտքի ճառագայթներով լուսավորելով նրա ճանապարհը:

Նման ուսուցիչներից է Ստեփանակերտի Հ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի, պատմություն առարկայի քաղաքային մեթոդմիավորման նախագահ Անիվարդ Հայրապետյանը:

Ծնվել է 1962թ. հունիսի 3-ին, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, ծառայողի ընտանիքում: 1979թ. ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը: 1984թ՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Մինչև 1990թ. աշխատել է ոչ մասնագիտությամբ: 1990-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 9 մսուր-մանկապարտեզում: 1992-ից առայսօր նա իր աշխատանքային գործունեությունը շարունակում է Ստեփանակերտի հ. 5 դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի:

Խստապահանջ, արագաշարժ, մասնագիտական խորը պատրաստվածություն ունեցող, խորաթափանց հայացքով Ա. Հայրապետյանի դասաժամի ամեն մի րոպեն հաշվարկված է, ռացիոնալ օգտագործված: Բնավորությամբ անհանգիստ է, պրպտող: Պահանջկոտ է ինչպես ուրիշների, այնպես էլ իր հանդեպ, պարտաճանաչ է և աշխատասեր:

Գովեստներ ու գնահատականներ չի շռայլում, միշտ օգտագործելով տեղին՝ ստիպում է, որ աշակերտը ձգտի ու հասնի հաջողության, ունենա մտավոր կարողություններ:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում կրթել ու դաստիարակել է հարյուրավոր ազնիվ մարդկանց, ովքեր այսօր աշխատում ու արարում են տարբեր ոլորտներում: Նրա յուրաքանչյուր դաս յուրովի է: Դասավանդում է ժամանակակից մեթոդներով, ձգտում ամեն կերպ հետաքրքիր դարձնել դասապրոցեսը:

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների քաղաքային և հանրապետական փուլերում, ինչպես նաև համահայկական հայագիտական մրցույթներում նրա աշակերտները ցուցաբերում են բարձր արդյունքներ՝ գրավելով մրցանակային տեղեր, ինչի համար էլ նա բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով, արժանացել նվերների ու դրամական խրախուսանքի:

2001թ. պատմություն առարկայից «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլում հաղթող է ճանաչվել: 2000-2001 ուստարվանից առայսօր քաղաքային մեթոդմիավորման նախագահն է:

Ուսուցմանը ներդաշնակ ու զուգահեռ՝ Ա. Հայրապետյանը ուշադրության կենտրոնում է պահում նաև դաստիարակչական գործընթացը:

Կարևորելով աշակերտների հայրենասիրական ու հայրենագիտական դաստիարակությունը՝ նա կազմակերպում է բազմաբնույթ միջոցառումներ՝ սեր սերմանելով դեպի հարազատ Արցախ հայրենիքը: Արժանահիշատակ են նրա կազմակերպած հայրենագիտական էքսկուրսիաները դեպի Տիգրանակերտ, Նիկոլ-Դումանի թանգարան, Ազոխ, Ամարաս, Գանձասար, Շուշի:

Սիրելի գործընկեր, շնորհավորելով 50-ամյա հոբելյանդ, մաղթում ենք առողջություն, արևշատություն, մանկավարժական բեղմնավոր գործունեություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Թող վարդերի անանց թարմությամբ լցվի քո ամեն օրը, և եթե կյանքն անակնկալներ մատուցի՝ լինեն միայն հաճելի և ուրախ:

Ստեփ. հ. 5 հիմնական դպրոցի

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՎ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իններորդ դասարանի գրականության դասագրքում Նահապետ Քուչակից և Սայաթ-Նովայից հետո մի էջի վրա բացատրություն է տրվում աշուղական երգի (խաղ) պատմության մասին: Չնայած Նահապետ Քուչակը մեր գրականության մեջ հայտնի է որպես հայրենների հեղինակ, այնուամենայնիվ, նրա կենսագրականում նշված է. «Նա ունեցել է վարպետ աշուղի (գուսանի) համբավ...»: Իսկ «Աշուղական երգ» էջում կարդում ենք. «Հայ իրականության մեջ աշուղական արվեստն սկզբնավորվել ու տարածվել է 16-17-րդ դարերում և փոխարինել է հին գուսանական արվեստին: Այսօր էլ մեր շատ հայտնի աշուղների ճանաչում են որպես գուսաններ՝ Գուսան Շերամ, Գուսան Շահեն և ուրիշներ: Վերջին տարիներին Հայաստանում ստեղծված «Աշուղների միությունը» նույնպես անդրադարձել է աշուղ-գուսան հասկացություններին: Արդյոք, նույնացվո՞ւմ են դրանք: Բանն այն է, որ գուսանական արվեստի մասին տեղեկություններ դասագրքում չկան, իսկ աշուղական արվեստի մասին տեղեկությունները շատ ավելի համեստ են: Գուսանը ստեղծագործող և կատարող արվեստագետ է հին և միջնադարյան Հայաստանում: Վաղ միջնադարյան հայկական թարգմանություններում և բնագրերում «գուսան»-ը գործածված է որպես հին հունական «միմոս» բառի համարժեք, որը ներառում է ընդհանրական մի իմաստ. այն նոր ժամանակներում համապատասխանում է «արտիստ» հասկացությանը: Գուսաններ են կոչվել երգիչները, նվագածուները, պարողները, պատմառասպելական զրույցներ, վիպական երգեր ավանդողները, ժողհրապարակային թատրոնի դերասանները, ձեռնածուները, խեղկատակները, աճպարարները, լարախաղացները: Հին Հայաստանում հայտնի էին Գողթն գավառի գուսանները: Այդ գուսանների մասին առաջին վկայությունները պահպանվել են Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ: Հենց այդ գուսանների երգերից են գրի առնվել «Արտաշես և Արտավազդ», «Տիգրան և Աժդահակ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» և այլ առասպելների չափածո տողերը: Սա վկայում է, որ գուսանները կապված են եղել հեթանոսական արվեստին: Անկասկած, եղել են նաև կին գուսաններ, որոնց Հին Հայաստանում անվանել են Վարձակ: Գուսանական արվեստը հարատևել է մինչև 15-16-րդ դարերը: Գուսանական արվեստի հիմքերի վրա, սկսած 16-րդ դարի կեսերից, զարգացում է ապրել աշուղական արվեստը: Աշուղ (արաբերեն՝ սիրահար) ինքնին հուշում է արվեստի հիմնական թեմատիկան: Աշուղական արվեստը տարածված է եղել Կովկասի և Արևելքի ժողովուրդների մեջ: Ի տարբերություն գուսանների (նրանց մեծ մասը հոգևորականներ էին), աշուղները գերազանցապես աշխարհիկ մարդիկ էին, որոնք իրենց երգերն ու խաղերը հորինում ու տարածում էին բանավոր կերպով, որոնք հետո գրի առնվեցին իրենց կամ ուրիշների կողմից: Իսկ շատ ավելի աշուղական երգեր գրի չեն առնվել ու կորսվել են անվերադարձ: Մեր գրականության մեջ պահպանվել են 400-ից ավելի աշուղների ստեղծագործություններ: Տարաբնույթ է այդ ստեղծագործությունների թեմատիկան: Ամենից առաջ ու ամենից շատ աշուղական գրականության մեջ մեծ տեղ են գրավել սիրային երգերը: Սիրային երգերի անզուգական օրինակներ են Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ճնշող մեծամասնությունը: Սայաթ-Նովայի 60-ի չափ հայերեն երգերից 47-ը սիրային են: Աշուղներն իրենց բնավորությամբ ազատախոս էին, համարձակ, չէին վարանում քննադատել, ծաղրել հասարակական չարիքները, բնակչության տարբեր խավերի թերություններն ու արատները: Աշուղներն իրենց ստեղծագործություններում արձագանքել են ժողովրդին հուզող պատմաքաղաքական իրադարձություններին: Իսկ ահա, ազատասիրության, հայրենասիրության գաղափարները, լուսավորության հարցերը 19-րդ դարի աշուղների երգերի առաջատար թեմաներն են դարձել: Աշուղական երաժշտությունը հստակորեն կարելի է տարբերել երաժշտության այլ ձևերից: Դա ժողովրդական երգ ու նվագի վրա հիմնված, կայուն ավանդույթներ ունեցող կայուն երաժշտություն է: Աշուղական երաժշտության մեջ լայնորեն օգտագործվում են երգի քառյակային ձևեր: Կիրառվում է մեղեդու ծավալման երեք սկզբունք՝ ասերգային, երգային և պարերգային: Աշուղական երաժշտության մեջ մեղեդիների ելևէջային հիմքը կազմում է շուրջ 20 ձայնեղանակ: Աշուղական երգ-նվագը կատարողական առումով ուրույն դպրոց է, բնույթով՝ համերգային: Աշուղները երգեցողությունը մատուցել են երաժշտական տարբեր գործիքների (սանթուր, քանոն, քամանչա, սազ, թամբուր, թառ, չոնգուր, քաման, ջութակ) նվագակցությամբ:

Աշուղական պոեզիան նախապես բանավոր լինելով՝ սերտորեն առնչվել է բանահյուսությանը: Չնայած հայ աշուղները հանդես են եկել 16-րդ դարի կեսերից, սակայն աշուղական պոեզիան հայ իրականության մեջ լայն տարածում ու ճանաչում է գտել 17-րդ դարում: Պատմաքաղաքական հանգամանքների բերումով աշուղական պոեզիան սկզբնավորվել է ոչ թե բուն Հայաստանում, այլ գաղթավայրերում (Նոր Ջուղա, Թիֆլիս, Աստրախան, Կ. Պոլիս), 18-րդ դարի Նոր Ջուղայի աշուղները (էգազ, Ղուլ Արզանի, Ղուլ Հարություն Սալմաստցի և ուրիշներ) հիմնադրել են իրանահայ աշուղական դպրոցը: Այդ նույն դարում կազմավորվել է վիրահայ աշուղական դպրոցը: Այդ դպրոցի նշանավոր ներկայացուցիչներն էին Սայաթ-Նովան, Շամլի Մելքոնը, Քիշիկ-Նովան, Ֆրեյդունը և ուրիշներ: Նրանք ապրել և ստեղծագործել են Թիֆլիսում: Աշուղական դպրոցներ են ստեղծվել նաև Թուրքիայում, Հյուսիսային Կովկասում, Գանձակում ու Բաքվում: Հայ թափառական աշուղներն իրենց երգերը հորինել են ժողովրդի խոսակցական լեզվով, հաճախ էլ՝ թուրքերեն, պարսկերեն, վրացերեն (ինչպես Սայաթ-Նովան): Շատ անգամ էլ նրանց անվանը կցվել են թուրքական կամ իրանական անուններին յուրահատուկ վերջավորություններ՝ -օղլի, -զադե և այլն: Միայն 19-րդ դարի 50-60-ական թվականներին աշուղական պոեզիան լայն տարածում գտավ Երևանում, Ալեքսանդրապոլում (Գյումրի), Սյունիքում, Արարատյան գավառներում: Նրանց ստեղծագործություններում գերակշռել են հայկական երգեր, իսկ 20-րդ դարի սկզբներին երգել են միայն հայերեն: Աշուղական երգերի ժողովրդականությունը հնարավորություն է տվել համախմբվել առավել հայտնի աշուղների շուրջ և ստեղծել աշուղական դպրոցներ աշուղների անուններով, ինչպես՝ Շիրինի դպրոցը Երևանում, հայտնի ներկայացուցիչներն էին Արամը, Հավասին, Մալուլը, Շահրին և այլք: Նոր կամ Ջիվան դպրոցը՝ Ալեքսանդրապոլում: Դպրոցի հանրահայտ աշուղներն էին Ջամալին, Սազալին, Ֆիզուհին, Շերամը և ուրիշներ: Իսկ ահա 20-րդ դարի երկրորդից երրորդ տասնամյակներից այդ դպրոցներն արդեն չկային: Խորհրդային տարիներին իրենց արվեստով փայլել են աշուղներ Հավասին, Աշոտը, Շահենը և ուրիշներ: Նրանց ստեղծագործությունները հաճույքով են լսում նաև մեր օրերում: Շատ աշուղներ, բնականաբար, թողել են գրական մեծ ժառանգություն, ու նրանց ստեղծագործությունները գեղարվեստական բարձր որակի բանաստեղծություններ են, որոնք իրենց գեղագիտական ճաշակով, հուզականությամբ մնայուն արժեքներ են: Միանգամայն ճիշտ է ասված, որ աշուղների մեծ մասը հիանալի բանաստեղծներ են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշուղական երգերն այժմ էլ շատ ավելի հարազատ են արվեստասեր ժողովրդին, ուստի արժե, որ այդ արվեստի զարգացման պատմությանը փոքրիշատե ծանոթ լինեն նաև դպրոցի բարձր դասարանների աշակերտները: Գուցե այս հոդվածն այդ ուղղությամբ որոշակի դեր խաղա: Մերօրյա աշուղներից առավել հայտնի է աշուղ Հայկազունը, որի շատ ստեղծագործություններ՝ «Հայե՛ր, միացե՛ք», «Հպարտ գնացե՛ք», «Գետաշեն», դարձել են զորամասերի ամենօրյա երգեր:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճան

ԳԱԲՈ ԱՊԵՐ - 85

Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գուրգեն Գաբրիելյանը հայ իրականության այն կարկառուն ներկայացուցիչներից է, ում գրիչը «ոսկյա» կարելի է համարել: Այդ անվանի մտավորականի խոսքարվեստն ազգային համ ու բույր ունեցող մի շողշողուն փունջ է, ուր նշանակալից են բառապաշարային արժեքները:

1. Մանկական գրականությանը յուրահատուկ լեզվական պարզությանն ու սրամտությանը գրավչություն հաղորդող, հմուտ ուսուցչի նրբությամբ ընտրած և մանկական գործերի ուղնուծուծը կազմող *-իկ* մասնիկով բառերի առատ գործածություն, որոնք ապահովում են փոքրերի նկատմամբ քնքշանք, փաղաքշանք, հոգատարություն, սրտացավություն: Կարելի է անվարան ասել, որ հեղինակը դա նրբաքանդակի զգացողությամբ է կիրառել: Այդ նրբացնող, քնքշացնող մասնիկով ոչ միայն առարկան, անձն է տիպականացրել, փաղաքշել, ինչպես՝ *բալիկ, բադիկ, դույլիկ, եղբայրիկ, թիթեռնիկ, ծիտիկ, շլդիկ, սուտլիկ. փիսիկ, քույրիկ* ևն, այլ նաև դրանց արտաքին ու ներքին հատկանիշներն է բնորոշել, մասերն է մեղմացրել, ջերմացրել, հարազատ դարձրել, ինչպես՝ *արյունիկ, թաթիկ, թևիկ, խատուտիկ, մատիկ, սիրունիկ, տոտիկ, քաղցրիկ* ևն: Ահա, օրինակ, այդ մասնիկների առատությամբ համահունչ, դյուրասահ, ախորժալուր, ներդաշնակ ու ջերմ կառուցված «Ծիտիկը» բանաստեղծությունը.

Այս ծիտիկը,
Դեռ ճուտիկ է,
Դեռ ճուտիկ ու
Խատուտիկ է,
Թույլ թևիկ ու
Թույլ ոտիկ է,
Իր մոր համար
Մի հատիկ է:
Թեև բնից
Ցած է թևել,
Պստիկ-մստիկ
Ծիտ է դառել,
Մայրն է էլի
Սնում նրան,
Թե գետնին,
Թե ծառի վրա,
Որ կտուցի
Դեղինն անցնի,
Որ սրտիկի
Ահը պրծնի,
Որ զորանա,
Շատ մեծանա...

Այստեղ, ինչպես այդ մեծ երախտավորի առաջին քննադատական գիրք նվիրած Լ.Գրիգորյանն է ճիշտ նշում՝ «...անբռնազբոս, նվագուն հանգախաղ է» տիրում վերից վար: («Արցախ աշխարհի օրհներգիչը», Ստեփ., 1988, էջ 13): Նշված շարքերին հավելվում և հանգավորումը հարստացնում են նաև ընտանեկան ջերմությամբ պարուրված՝ *պապիկ, տատիկ, հայրիկ, մայրիկ* քաղաքավարական բառերը, ինչպես նաև նման, բայց քարացած մասնիկներով կամ վերջնահնչյուններով ավարտվող բառերը՝ *աղջիկ, ծաղիկ, փուչիկ, քուչիկ* ևն:

2. Մանկական գրականության հպարտություն համարվող Գ. Գաբրիելյանը հայերենի հարուստ բառապաշարի մարգարտափայլ բառն ու բանը գործածելիս երբեմն ցուցաբերել է միկրոսկոպային նրբանկատություն: Այս կապակցությամբ արժե հիշատակել «Լուսարար» թերթում Կ. Դանիելյանի մատուցած հուշ-պատմությունը՝ Արմ. Հովհաննիսյանի «Գանձասար» երկու քառյակից բաղկացած բանաստեղծության ընդարձակման ու երգի վերամշակման՝ Գաբո-Ապոր կատարած աշխատանքի վերաբերյալ («Ինչպես է ծնվել «Գանձասար» երգը», «Լուսարար», հ. 14-15, հունիսի 15, 2007): Կրկներգի «սրբատունս» ընտիր, աստվածահաճո բառը վերջում փոխարկվել է խրոխտ ու քաջածին «արծվաբունս» բառով, որն ակնբախ է դարձնում արցախածին երգահան-բանաստեղծի ազատատենչ հոգու կերտվածքը՝ «Ավա՜ղ, ճեղք է տալիս սրբատունս-Ավա՜ղ, ճեղք է տալիս արծվաբունս»: Կամ՝ «Արցախ» հատուկ անունից սերած ԱՐՑԱԽԱՆԱԼ հեղինակային խոսուն նորակերտությունը, որն իր իմաստային անաղարտությամբ (ինքնուրույնանալ, իսկական կերպն առնել) մի ադամանդափայլ արտահայտություն է մեր բառագանձարանում.

Ես ապրում եմ Ղարաբաղում...
Եվ չեմ ապրի մի այլ հողում...
Եվ կմեռնեմ պապերիս պես՝
Արցախացած *նրա կողում:*

Կամ՝ բանահավաքչական ու ամբողջական դարձրած գործերում կատարած արցախյան բարբառային բառերի տարբերակներից կատարած ընտրությունը՝ *օ/ո //ու//ը* հնչյունափոխական հաջորդականության միջին օղակը վեր հանելու բնագավառում «Ուրուրոցեն երգը» (օ/որոց-ուրորոց-ըրորոց):

Ժողովրդական բանահյուսության մշակումներում անվանի բանաստեղծը կարողացել է պահպանել ազգային ու տեղանքային «աղն ու համեմունքը»՝ ժողովրդական հյութեղությունը, մանկական աշխարհի աշխուժությունը, արտաբերական ներդաշնակությունը, հնչյունական նվագայնությունը, պապենական իմաստնությունը, և ինչպես Ս. Խանյանն է նշում՝ « ...լավատեսությունն ու հոգու հարստությունը» (Ս. Խանյան, «Գ. Գաբրիելյանի աշխարհը», Եր., 1997, էջ 58): Դրա անզուգական արտահայտությունը «Ղարաբաղ» բանաստեղծության վերջին ընդհանրացում քառատողն է.

Տու մի արծիվ, ես քու ճոտը,
Մեր շահ թոթը, սարեն օթը,
Մեզ պահողը հացեն ճոթը,
Մին էլ արթար պիհեն կոթը...

3. Ընդհանրական բառերի մասնավորման, կոնկրետացման, երեխաների բառապաշարի հարստացման, ճանաչողական-ուսուցողական բնագավառում բավականին գործեր ունի կատարած հանրահայտ մանկագիր բանահավաքը: Դրանք ընդգրկված են թե՛ ազգագրական գործերում («Կճեխաշ»՝ ընդեղեն՝ եգիպտացորեն, ցորեն, սիսեռ, լոբի, «ժենգյալով հաց»՝ ժենգյալ՝ թրթնջուկ, ճռճռուկ, պռավապուրտ, սիմսիմոկ, սպանախ, կնանչի՝ կնձմնձուկ (կարմանձուկ, կինձ, սամիթ, սոխ ևն) և թե՛ մանկական տարաբնույթ բանաստեղծություններում (ընտանի թռչուններ՝ հավ, սագ, բադ, հնդկահավ, վայրի թռչուններ՝ հավք, ագռավ, աղավնի, արագիլ, լոր, ծիտ, ծիծեռնակ, կաչաղակ, կաքավ, կկու, կռունկ, ճնճղուկ, սարյակ, սիրամարգ, տատրակ ևն, միրգ՝ բալ, ընկույզ, թութ, խաղող, խնձոր, նարինջ, սալոր, սերկևիլ, տանձ ևն): Այս բնագավառում ամենահարուստը ԹՌՉՈՒՆ բառույթն է, որի նույնիսկ ենթատեսակների նկարագրության հարստությամբ առանձնանում է «Մեր թևավոր բարեկամները» գիրքը (Ստեփ,. 2004): Եթե «Փոքրիկի զարմանքը» («Հերոստած տապը», Ստեփ., 2005, էջ 32) բանաստեղծությունում մանկական տեսանկյունով բացահայտում է նրանց ոչ տարբերակված լինելը՝ «Զարմանում եմ՝ Հավքերն այդքան Սիրուն-սիրուն... Այս աշխարհում Ո՞նց են ապրում Առանց անուն», ապա «Մեր թևավոր բարեկամները» գրքում կարծես այդ հարցը մանուկների համար մեղմացվում է՝ ընդհուպ մոտեցվելով գիտականին, այսինքն՝ տրվում են իրար նման, բայց տարբեր թռչնակների անվանումներ՝ հասկանալի դարձնելով տարբեր տեղեր ապրելուց նրանց ձեռք բերած առանձնահատկությունները: Օրինակ՝ ԵՐԱՇՏԱՀԱՎ՝ երկնագույն երաշտահավ, միջերկրական երաշտահավ, մեծ երաշտահավ, ՃՆՃՂՈՒԿ՝ դաշտային ճնճղուկ, իսպանական ճնճղուկ, ժայռային ճնճղուկ, ձյան ճնճղուկ, կարճամատ ճնճղուկ, տնային ճնճղուկ, ՇԱՀՐԻԿ՝ աղորիքի շահրիկ, երգող շահրիկ, սպիտակաբեղ շահրիկ, ՊՐՈՒՆԵԼԱ՝ անտառային պրունելա, ալպիական պրունելա, խայտակուրծք պրունելա ևն: Այս շարքի գործերում անգամ զգացվում է գիտական տարաբնույթ աղբյուրներից ճշգրիտ տեղեկություններ հավաքելու մանկավարժական պատասխանատվության պարտաճանաչության նրբակրթությունը, այն է՝ բնադրման ձևերը, ձվերի քանակը, գունագեղությունը, ձևը, չափը, ձայնային առանձնահատկությունները, փետրավորման յուրահատկությունները, սնվելու ձևերը ևն, որով երեխաների համար հուշողական է դարձնում նրանց օգտակարության, գեղեցկության, հետաքրքրության չափերը: Օրինակ, ահա «Ծնկլտանը».

Իր գունավորմամբ
Դեղնափորիկի
«Շորեր է հագնում»...
Ոտքերը սև են,
Փորը՝ դարչնագույն:
Մեզ մոտ բնակվող
Չվող թռչուն է.
Գարնանը գալիս,
Իսկ հոկտեմբերին
Չվում-թռչում է:
Գնդաձև բույնը
Միշտ էլ սարքում է
Խոտերից չորուկ՝
Ծառ ու ճյուղերին
Կամ խիտ թփերում:
Գալիս-ապրում է
Մինչև հոկտեմբեր,
Ածում հինգից-յոթ
Կարմրադարչնագույն
Պտերով ձվեր:
Սնվում է մանրիկ
Ու անողնաշար
Կենդանիներով ...
Աչքի չի ընկնում
Իր ճոխ երգերով:

ԿԱՆԱՉ ԳԵՂԳԵՂԻԿ

Մարմնի վերևը
Կանաչ-դարչնագույն,
Աչքին «բարակ հոնք»,
Փորը դեղնավուն:
Մեզ մոտ բնակվող
Թռչուն է չվող,
Խոտե բնի մեջ
Հուլիսին ձվող:
Երգը բավական
Հնչեղ ու բարձր է,
Չեմ ասի սակայն՝
Սոխակից քաղցր է...
Ապրում է միայն
Մերկ բացատներում
Եվ մեր գետերի
Ճոխ հովիտներում:

Տեսակավորված ու կոնկրետացված թռչունները ներկայացնելիս հմուտ մանկագիրը ձգտում է նաև մեր բառ ու բանին հարազատություն, ընկալունակ բաղադրիչներով համադրված ու խոսուն անվանադրմամբ արտահայտություններ գործածել, որպեսզի թռչունների բազմազանության մտապահման համար շատ ջանք ու ճիգ չգործադրվի, ինչպես՝ գեղգեղիկ, եղեգնաթռչնակ, խածկտիկ, խաղկտիկ, ծնկլտան, ծլվլիկ, կարմրակատար, հատբեկիչ, ձիաթռչնակ, ձկնկուլ, ճոճահավ, չքչքան, պապաճիշտ ևն՝ ներառյալ բառակապակցությունները՝ երգող կեռնեխ, երկարապոչ երաշտահավ, նրբակտուց եղեգնաթռչնակ, պարող քարաթռչնակ ևն: Թռչունների նկարագրություններում տարբերակվում են նաև երգեցիկ խմբերը՝ *ամուրիկ, արշալուսիկ, արտուտիկ, գեղգեղիկ, կեռնեխ, շահրիկ, սերինուս, սոխակ:* Թռչունների գույների ընդհանրական-գնահատողական ՆԱԽՇՈՒՆՆ առավել շատ կոնկրետանում ու ներբերանգային բազմազանությամբ աչքի է ընկնում էլի թռչունների նկարագրությունում՝ ներառյալ բաղադրյալ կառույցները, ինչպես՝ գորշակարմիր, կարմրագույն, շիկակարմրավուն, կարմրավառ, շագանակե վարդագույն, բաց դարչնագույն, դարչնագույն, ձնագույն, մոխրագույն, կապտամոխրագույն ևն:

4. Հմուտ ստեղծագործող ու գիտակից մանկավարժ Գ. Գաբրիելյանի բանարվեստում առանձնանում են նաև գիտահանրամատչելի բառերը: Այս կապակցությամբ գիտական-մեկնողական արժեքով են «Նախանշաններ» (Ստեփ., 2000) գրքում զետեղված եղանակի կանխագուշակման բացատրություններն ընդհանրացնող վերնագրերը: Օրինակ՝

ՇԱԳԱՆԱԿԻ ՏԵՐԵՎԸ

Մի օր առաջ
Անձրևից
Շագանակի
Տերևին...
Ծոր-արցունքն է
Դուրս գալիս
Անգամ այրող
Արևին:

ՄԵՂՈՒՆ

Երբ երկինքը
Այլայլվում է,
Ամպոտում ու
Մռայլվում է...
Բայց փեթակ չի
Մտնում մեղուն...
Չի լինի էլ
Ոչ մի տեղում:

ԽԽՈՒՆՋԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Խխունջն արագ
Թե մտնի խեցին,
Պիտի որ գժվի
Ամպերի խենթ ձին:

ՁԿՆԱԽԱՂԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Ձուկը ցերեկը
Թե խաղաց գետում...
Գիշերն այդ օրը...
Շանթեր է նետում:

Գիտաբառերի գործածության շրջանակներում առանձնանում են նշված «Մեր թևավոր բարեկամները» և «Ուրախ հայերենը» (Եր.,1999): Եթե առաջինում թռչնատեսակներն են հանրամատչելի նկարագրություններ*ը*՝ ժուլան, պրունելա, սերինոս, օլյապկա, ապա երկրորդում «չոր» համարվող լեզվաբանական գիտաբառերը՝ հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական՝ հնչյուն, ձայնավոր, բաղաձայն, վանկ, արմատ, ածանց, հոմանիշ, հականիշ, գոյական, եզակի թիվ ևն, հանրամատչելի ու աշխույժ ձևերով են բանաստեղծականացված, որոնք առավել նպատակային են տարրական կրթության վերջին դասարանների, կրկնողական զրույց դասերի, արտադասարանական ընթերցանությունների, արհեստագործական ուսումնարանների համար: Ահա «Բայի երեք եղանակի» կազմության գիտահանրամատչելի բառախաղ նկարագրությունը.

Առնեմ դերբայն անորոշ
(պետք չեն հարց ու հարցական),
Մ, Ս-գրեմ Լ-ի տեղ,
Եվ ստանամ ըղձական,
Հետո բային անհապաղ
ՊԻՏԻ կցեմ, Կ կցեմ,
Որ էլ դասին՝ ցուրտ ու պաղ,
Եղանակից չմրսեմ:

Լեզվաբանական գիտաբառերի ու այլ բնագավառի նույնանունների կիրառությունում հմուտ մանկավարժ ստեղծագործողը նույնիսկ կարողանում է վարպետորեն կառուցված զավեշտով՝ աշակերտի սխալ պատասխան բառն ուշադրության կենտրոն դարձնել ու երեխայի հետաքրքրությունն արթնացնել ճիշտի ուղղությամբ: Օրինակ, ահա ԵՂԱՆԱԿ ու ԺԱՄԱՆԱԿ հասկացությունների վերաբերյալ վերոհիշյալ տիպի կառույցներ.

Ուսուցիչն Անուշին է
Հարցով դիմում.
- Անուշ, քանի՞ եղանակ է
Բայն ունենում:
- Չորս եղանակ,-շտապում է
Անուշը մեր
Ու թվարկում՝ գարուն, ամառ,
Աշուն, ձմեռ:

Մի ընթրիքի
Գայանն ասաց Արային.
- Մենք ուտում ենք,
Ո՞ր ժամանակն է բայի...
- Դե՛, դա ի՞նչ է, որ չիմանամ,
Ա՛յ Գայան, մեր ընթրիքի
Ժամանակն է
Անպայման:

Սիլվա ՄԻՆԱՍՅԱՆ
Դոցենտ

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՅԴՔԱՆ ՀԵՌՈՒ ԵՎ ԱՅՍՔԱՆ ՄՈՏ

Նկարիչ Յուրի Բաղդասարովի ծննդյան 60-ամյակի առթիվ

Նկարիչ Յուրի Բաղդասարովի հետ իմ հեռակա ծանոթության առիթը Հյուսիսային Կովկասում հրատարակվող թերթերից մեկում տպագրված նրա «Ֆիդայիներ» նկարն էր, որը ձեռքս էր ընկել պատահաբար: Նկարն ինձ շատ դուր եկավ, և առանց այլևայլության որոշեցի զետեղել մեր ազգային-ազատագրական շարժմանը նվիրված իմ «Արցախը՝ չսանձած նժույգ» գրքում: Երբ 2001-ին այն լույս տեսավ, իմ նկարիչ ընկերներից մեկը, ով համատեղ ցուցահանդեսից ծանոթ էր նրան, մի օրինակ ուղարկեց Կիսլովոդսկ, ուր բնակվում և ստեղծագործում է Բաղդասարովը: Պիտի կարծել, որ դա անակնկալ էր հեղինակի համար, ինչպես ինձ համար (ինչո՞ւ միայն ինձ համար) հաճելի անակնկալներ դարձան իր նախնիների հայրենիքից հեռո՛ւ-հեռու ապրող նկարչի հայաշունչ (ու ոչ միայն) աշխատանքները, որոնցից առանձին նմուշներ ուղարկել է ինձ: Հարկ է նշել, որ տարածքային հեռավորությունն ամենևին չի խանգարել արվեստագետին՝ մոտիկից տեսնելու, զգալու, պատկերելու իր ազատատենչ ժողովրդի ոգորումները, փարվելու իր արմատներին, մայրենի պատմությանը, մշակույթին: Ասվածի պերճախոս վկայություններ կարող են դառնալ Բաղդասարովի հեղինակած բազմաթիվ սյուժետային գործերը, դիմանկարները, գրքային նկարազարդումները և այլն:

Յուրի Արամի Բաղդասարովը (Բաղդասարյան) ծնվել է 1952թ., Ստավրոպոլի երկրամասի Կիսլովոդսկ քաղաքում: 1973-ին ավարտել է Ռոստովի Մ. Գրեկովի անվան գեղարվեստի ուսումնարանը: 1980-ից Ռուսաստանի Դաշնության նկարիչների միության անդամ է: Բազմիցս մասնակցել է միութենական, համառուսական, միջազգային ցուցահանդեսներին, անհատական ցուցադրությամբ հանդես եկել Մոսկվայում, Երևանում, Ստեփանակերտում, Սարատովում, Կովկասի և ՌԴ այլ քաղաքներում: Նրա աշխատանքները տեղ են գտել Ռուսաստանի, Հայաստանի, Բուլղարիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի խոշոր թանգարաններում, ռուսական և արտասահմանյան մասնավոր հավաքածուներում:

Բաղդասարովը, մասնագետների հավաստմամբ, Ռուսաստանի ժամանակակից գրաֆիկայի ամենահետաքրքիր վարպետներից մեկն է: Նա լայն ճանաչում է գտել հատկապես գրքանկարազարդման և հաստոցային գծանկարչության ոլորտում: Աշխատում է տարբեր տեխնիկական կատարման միջոցներով՝ տեմպերա, ջրաներկ, գուաշ և այլն: Զբաղվում է նաև ճարտարապետական ձևավորմամբ (դիզայն), կիրառական արվեստով, վիմագրությամբ ու փորագրությամբ: Արժե մատնանշել, որ 1990-ականներին նրա ձևավորմամբ է կատարվել Կիսլովոդսկի Հայ Առաքելական եկեղեցու ներքին հարդարանքը և կառուցվել Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողը:

Յուրի Բաղդասարովի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում հայկական թեման: Այդ առումով, ինչպես արվեստաբան Ն. Ապչինսկայան է նկատել, նկարչի համար խորհրդանշական, խտացված օրինակ կարող է ծառայել նրա «Սայաթ-Նովա» աշխատանքը, ուր, հարկավ, հեղինակն իր անսահման սերն է արտահայտել հասարակ ժողովրդի հանդեպ և խորին ակնածանքը՝ ժողովրդի միջից ելած մեծությունների նկատմամբ: Սիրված գուսանը հինավուրց եկեղեցու բակում, հաստաբուն, ճյուղատարած ծառի տակ, «աշուղի բաս» քամանչայից անբաժան՝ երգում է իր շուրջը խմբված «խալխի» համար: Նկարում հարյուրից ավելի մարդիկ են պատկերված, և բոլորն այնքան տարբեր, ինքնատիպ ու այնքան իրար նման: Թվում է, թե մեծ երգչի շուրջն է բոլորել ինքը՝ ողջ հայ ժողովուրդը:



Մի սքանչելի պատկերասրահ է իրենից ներկայացնում անվանի գրող Աղասի Այվազյանի «Հին Թիֆլիսի ցուցանակները» ժողովածուի նկարչական ձևավորումը, որն աչքի է ընկնում ոճական յուրահատուկ հնարքներով և ընթերցողի առջև տեսանելիորեն վերակենդանացնում է հինավուրց քաղաքի, մասնավորաբար, նրա հայկական Հավլաբար թաղամասի նիստն ու կացը՝ իր կենսախինդ մարդկանցով հանդերձ, խստորեն պահպանելով ազգային-կենցաղային կոլորիտը: Ինչպես Բաղդասարովի շատ գործերում, այստեղ էլ կերպարներն առանձնանում են, այսպես ասած, հումորիկ կեցվածքով՝ անմեղ ժպիտ հարուցելով դիտողին:

Նկարչին յուրահատուկ այս ոճը առավել շահեկանորեն դրսևորվել է հայկական ժողովրդական, մասնավորապես Հովի. Թումանյանի և Ավ. Իսահակյանի մշակած հանրահայտ հեքիաթների նկարազարդումներում, որոնք տարիներ առաջ առանձին գրքով հրատարակվել են «Կավկազսկայա զդրավնիցա» հրատարակչության կողմից, Միներալնիե Վոդի քաղաքում՝ Յու. Բաղդասարովի նախաձեռնությամբ:

Մեր հանճարեղ էպոսը շատ նկարիչների է հրապուրել, և քիչ գործեր չեն ստեղծվել «Սասունցի Դավթի» թեմաներով, այնպես որ, այս ուղղությամբ նոր խոսք ասելը կարծես թե անհնար պիտի լիներ: Բայց արի ու տես, որ Բաղդասարովին հաջողվել է բոլորովին ինքնատիպ մարմնավորում տալ բազմիցս կրկնված թեմային, հմտորեն բացահայտելով մեր ժողովրդի՝ անհիշելի ժամանակներից եկող կենսունակությունն ու հարատևությունը, չարիքի, անարդարության հանդեպ նրա ունեցած հեգնական, ժխտողական վերաբերմունքը, բարու հաղթանակի ըմբռնումներն ու դրանց հաստատումը:

Հայ ժողովրդի փայփայած իդեալները, նրա ստեղծագործական հանճարի դրսևորումներն իրենց արտացոլումն են գտել տաղանդավոր նկարչի՝ Ավետիք Իսահակյանի, Արամ Խաչատրյանի, Հովհաննես Բաղրամյանի, Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Եվգենի Վախթանգովի, Մինաս Ավետիսյանի դիմանկարներում, որոնց հեղինակը կերպավորել է ճշմարիտ անմիջականությամբ, մեսրոպյան ոսկեղենիկ այբուբենին ծոնված և ուրիշ այլ գործերում:

Այդուամենայնիվ, իմ կարծիքով, Յուրի Բաղդասարով-նկարչի ամենախիզախ աշխատանքը, եթե կարելի է այդպես արտահայտվել, թերևս եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի պատկերազարդումն է, հիրավի, գնահատանքի և խրախուսանքի արժանի մի գործ, որը պատիվ կարող է բերել ամենաերևելի նկարչին անգամ: Այն տպագրվել է բոլորովին վերջերս, վերոնշյալ հրատարակչությունում, Յակով Խաչատրյանցի անթերի թարգմանությամբ և Մարիետա Շահինյանի հայտնի առաջաբանով, Ռուսաստանի Հայերի միության Կիսլովոդսկի և Պյատիգորսկի քաղաքային մասնաճյուղերի աջակցությամբ ու նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին: Նախագծի հեղինակը դարձյալ Բաղդասարովն է:



Վեպում ուղիղ հարյուր գծանկար է ներդրված, որոնց միջոցով էլ նկարիչը բազմակողմանիորեն իմաստավորել, բացահայտել է չարենցյան երկի բուն գաղափարն ու նրա հերոսներից յուրաքանչյուրի էությունը՝ ողբերգականի ու կոմիկականի, քնարականի ու էպիկականի յուրահատուկ զուգորդմամբ: Ինչպես հայտնի է, «Երկիր Նաիրին» ոչ այնքան երգիծական, որքան ողբերգական ստեղծագործություն է, և դա են հենց շեշտում Բաղդասարովի այնքան սիրով ու նվիրումով արված պատկերազարդումները, որոնք եզրափակվում են «Հայաստան. Նոյից՝ 21-րդ դար» շատ բան ասող նկարով...

Նոր հաջողություններ մաղթենք իր երկրորդ 60-ամյակը թևակոխած հայ նկարչին, որի ստեղծագործությունները թեև արարվում են հեռվում, դրսում, սակայն շատ մոտ ու հարազատ են մեր սրտերին:

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հուշ

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՐԳԸ

Ժողովրդական երգեր շատ եմ սիրում: Ականջս դեռ մանկուց որսացել է այդ թրթռոցները և խոր արմատ գցել իմ հոգում, այնքան խոր, որ ծիլ տվեց ու դարձավ երգ իմ շուրթերին: Բայց այսօր իմ մասին չէ, որ պիտի գրեմ, այլ Հովհաննեսի՝ կույր Հովհաննեսի:

Հովհաննեսը մեր գյուղից էր: Մեր տան վերևի տունը նրանց տունն էր, և հաճախ երեկոները նա երգում էր: Գալիս էր նստում մեր կտուրին, այն ժամանակ մեր գյուղում թիթեղե տանիքները հազվադեպ էին: Գյուղը կառուցված էր այնպես, որ մի թաղի կտուրները վերևի թաղի բակերն էին, և մենք՝ երեխաներս, խաղում էինք հարթ, տեղ-տեղ բացված երդիկներով կտուրներին: Ես փոքր էի այն ժամանակ, և երբ Հովհաննեսը երգում էր, բարձրանում էի կտուր և անհագուրդ լսում նրա երգերը: Շատ վատ տեսողության պատճառով նա երգում էր՝ հայացքը հառած մի կետի: Հիմա, երբ հիշում եմ այդ երեկոները, ինձ թվում է, թե Հովհաննեսի հոգում կային աչքեր, որոնք չէին կարող չոգևորել նրա նման նուրբ հույզեր ունեցող մարդուն: Արևը մայր էր մտնում, և նրա մուգ կարմիր ճառագայթները հրդեհում էին անտառը իրենց բոսորով: Այստեղից-այնտեղից լսվում էին գյուղ մտնող նախիրի բառաչը, իրենց կովերին քնքշանքով տուն կանչող կանանց ու աղջիկների ձայները: Այդ ձայներից խենթացած, Հովհաննեսի մենավոր հոգին երգում էր.

- Սիրեցի, յարս տարան,
- Յարա տվին ու տարան,
- Էս ինչ զուլում աշխարհ է,
- Պոկեցին սիրտս տարան...

Հովհաննեսի մղկտացող ձայնը մղկտացնում էր իմ աչքերը, և չգիտես ինչու, ես լաց էի լինում առանց հասկանալու երգի իմաստը: Իսկ երբ Հովհաննեսն ինքնագործ խմբի հետ երգում էր բեմից, նրա հուզաթաթախ երգից ու դաժան ճակատագրից մղկտում էր ամբողջ դահլիճը:

Մեր գյուղն ուներ նաև ինքնագործ թատրոն, որը բավականին բարձր հեղինակություն ուներ տարածաշրջանում: Բոլոր պիեսների գլխավոր դերակատարը հայրս էր լինում: Թումանյանի «Գիքորն» էի դիտում՝ բեմի առաջամասում կանգնած: Բազազ Արտեմը հայրս էր: Բալի պատճառով Գիքորի կերած ապտակն այնքան կծու էր, որ խեղճի աչքերից արցունքներ թափվեցին: Երբ նա գիշերը կծկվեց իր անկյունում, բեմի հետևից հնչեց Հովհաննեսի «Որսկան ախպերը»: Ես սկսեցի բարձրաձայն հեծկլտալ, մայրս ինձ դուրս տարավ: Գիքորը բեմից դուրս կանգնած էր և շփում էր այտը: Ես մոտեցա նրան, քնքշորեն շոյեցի այտն ու ասացի.

- Ես հայրիկիս հետ էլ չեմ խոսի, ցավում է, հա՞,...

- Հիմա անցավ, հա, անցավ:

- Գիքորը, սիրելի ընթերցող, իմ մոտիկ բարեկամ. վաստակավոր երգիչ Էդվարդ Դարբինյանն էր:

Ահա այսպես ժողովրդական երգը մտավ իմ մեջ: Իմ հայրական կողմը երգող են. երգում էր հայրս, քույրս, եղբայրս, հորեղբորս տղաները, հիմա երգում են աղջիկս, թոռներս: Այնպես որ, կյանքս ապրել երգի մեջ, երգն էլ ապրել է իմ մեջ ու երբ վարարել է, տարել է ինձ իր հոսանքով, խփել աջ ու ձախ, դատարկել սիրտս ու հանդարտվել: Ու ամեն անգամ, երբ մղկտացող երգ եմ լսում, հիշում եմ կույր Հովհաննեսին, արցունքներս առանց ինձ հարցնելու դուրս են ժայթքում ու թացացնում երգի տողերը, պարպում, դատարկում...

Ընթերցողս հիմա կասի, դու Հովհաննեսից խոսի, Հովհաննեսից; Ի՞նչ եղավ նրա հետ:

Հովհաննեսին, սիրելի ընթերցող, ազգ-բարեկամներով, հարևաններով ամուսնացրին Աղունիկ անունով մի աղջկա հետ, որը առաջին հղիությունը վիժելուց հետո ցնորվեց ու տանից փախավ: Հովհաննեսի երգը դարձավ կարոտ, դարձավ մրմուռ, հետո էլ փակվեց տան պատերի ներսում: Ես երկար ժամանակ թափառում էի նրա տան պատերի տակ: Երգը չկար, Աղունիկը նրան կալանքի տակ էր առել ու գնացել: Հույսս կտրեցի ու նոր երգ փնտրեցի, իսկ Հովհաննեսը... Մի օր էլ լսեցի, որ նրան իր անկողնում մահացած են գտել՝ կրծքին սեղմած Սայաթ-Նովայի երգարանը:

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՆՎԻՐՎԱԾ ՄՈՒՐԱՑԱՆԻՆ

«Օրհնյալ լինի այն ժողովուրդը, ով Մուրացան է ծնել: Նա աշխարհի առաջ հպարտանալու իրավունք ունի»:

Լ. Անանյան

Հիրավի, մենք հպարտությամբ և շնորհակալությամբ ենք արտասանում Մուրացանի անունը՝ նրան գնահատելով իբրև ազգային հանճարի ականավոր դեմքերից մեկը: Դրա առհավատչյան է Արցախում արդեն իսկ ավանդույթ դարձած՝ արվեստի Մուրացանյան օրերի անցկացումը: Մայիսի 31-ին մեծանուն գրողին նվիրված միջոցառում անցկացվեց Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցում: Ներկա էին ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, արցախցի գրող Կիմ Գաբրիելյանը, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանը, քաղաքի դպրոցների հայ գրականության ուսուցիչներ:

Բեմը ձևավորված էր օրվա խորհրդով. Մուրացանի դիմանկարը, նրա թևավոր մտքերը, հայ դասականների խոսքերը նրա անզուգական գործերի մասին:

«Մուրացանը սարնիվեր բարձրացած և լեռնապարի գագաթին իր փառքի դրոշն ամրացրած մեծ դասական է»,- այսպես սկսեց բացման խոսքը միջոցառման կազմակերպիչ, դպրոցի ՄԿԱԳՏՏ Մ. Խաչատրյանը, որին հաջորդեց Ս. Խանյանի «Անմահ Մուրացանին» բանաստեղծության աշակերտների արտասանությունը: Պետք է ասել, որ աշակերտները հպարտությամբ էին արտասանում: Այնուհետև նրանք հակիրճ ներկայացրին Մուրացանի կյանքն ու գործունեությունը, որը հեշտ ու խաղաղ չի անցել:

Մուրացանը թանկ ու հարազատ է մեզ, որովհետև նրա ստեղծագործություններում պատկերված են մեր նախահայրերի ազնիվ աշխատանքը, ստեղծագործական կորովը, հերոսական մաքառումներն ընդդեմ դաժան ճակատագրի:

Մուրացանը բոլոր ժամանակներում խորհուրդ ունի տալու, և նրա պատգամներին հլու՝ քայլում ենք դեպի ապագան: Նրա «Գևորգ Մարզպետունին» իր գաղափարաբանությամբ, ազգային միասնականության խորհրդով բացառիկ է, խիստ արդիական: Որպես պատգամ, որպես օրվա խորհուրդ՝ բեմից Սեյրան Հարությունյանը (8-րդ «ա» դասարան) հնչեցրեց պատմավեպի հերոս Գևորգ Մարզպետունու խոսքը. «Երդվում եմ ձեր առջև, երդվում եմ իմ հայրենիքի անունով և Մաշտոցի սուրբ գերեզմանով, որ չեմ վերադառնա այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հագարացին չհալածեմ հայրենիքիս սահմաններից»:

Ուշագրավ էր Մարզպետունու (Արման Մանգասարյան, 7-րդ «ա» դաս.) և թագավորի (Գևորգ Վանյան, 7-րդ «ա» դաս.)

երկխոսություն-բեմադրությունը: Տեսնել էր պետք, թե ինչ ոգևորությամբ էին տղաներն իրենց դերերում: Հիրավի, հայրենասիրությունն արցախցիներիս մոտ մանկուց է սերմանվում:

- Կա՛մ կհաղթանակեմ, կա՛մ թե իմ խմբով իսպառ կջնջվեմ:

«Մարզպետունու» այս խոսքին հաջորդեց հայկական հաղթական «Քոչարին», որը հիացրեց ներկաներին:

Հապա որքան հուզիչ ու հետաքրքիր էր մի դրվագի բեմադրություն «Ռուզան» դրամայից:

Ռուզանի դերում էր 7-րդ «ա» դասարանի ուսման գերազանցիկ Օքսաննա Բալայանը: Նա ասես բնատուր դերասան էր:

- Քանի դեռ փոքր էի, հայր իմ, ուսուցանում էիր ինձ՝ սիրել հայրենիքը իմ անձից ավելի և նրա բարօրության համար զոհել ամենը, ինչ որ ունիմ թանկագին: Արդ հասել է ժամը քո պատվերը կատարելու. մի՞թե դու այժմ հակառակը պիտի խրատես:

Պետք է խոստովանեմ, որ «Ռուզանի» մենախոսության ժամանակ շատերս մեր արցունքներին ակամա ազատություն տվինք: Աղջիկն իր դերում էր, նա խոսում էր անկաշկանդ, հուզիչ և տպավորիչ:

Այնուհետև աշակերտներն արտասանեցին Մուրացանի թևավոր մտքերից. «Ամենից ավելի սիրեցեք միասնությունը, որովհետև դա այն ուժն է, որ լեռներ է պատռում, ամբարտակներ է կործանում, գետերի ընթացքն է կասեցնում» որին հաջորդեց «Հայեր, միացե՛ք» հայրենասիրական երգը:

- Միջոցառումը բովանդակալից էր ու նպատակային: Այսօր առավել կարևոր է մատաղ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելը, և այս միջոցառումը կնպաստի աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը,- իր խոսքում ասաց կրթության բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանը:

Նման միջոցառումները շատ կարևոր են արցախցիներիս համար: Այս մեկը, համեմված հայրենասիրական վեհ գաղափարներով, կնպաստի նաև մատաղ սերնդի բարոյական, գեղագիտական ու հայեցի դաստիարակությանը:

Մեծ դասականին ոգեկոչելով՝ մեզնից յուրաքանչյուրը համոզվում է, որ հայ մշակույթը շարունակական զարգանում է, և որ Մուրացանի ստեղծագործությունը մեր ազգային հպարտության այն հարթակն է, որի վրա պիտի խարսխվեն մեր հետագա ձեռքբերումներն ու հաղթանակները:

Ռենա ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ստեփ. հ. 5 հիմն. դպրոցի փոխտնօրեն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2012-2013 ՈՒՍՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. *Հեռակա բաժին՝ հետևյալ մասնագիտություններով՝*

Ծածկագիր	Մասնագիտության անվանում	Ընդունելության քննությունների ժամանակացույց			Ուսման ժամկետը
03400	Պատմություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Հայոց պատմության (բանավոր) 17.08.2012	Մայր. պատմ. (բանավոր) / Անգլերեն (գրավոր) 21.08.2012	5 տարի
03500	Բրդավաճառություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Հայոց պատմության (բանավոր) 17.08.2012	Անգլերեն (գրավոր) 21.08.2012	5 տարի
03600	Կրոնագիտություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Սոցիոլ. հիմունք (հարցազրույց) 17.08.2012	Անգլերեն (գրավոր) 21.08.2012	5 տարի
03900	Հայոց լեզու և գրականություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Հայոց պատմության (բանավոր) 17.08.2012		5 տարի
03100	Անգլերեն լեզու	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Անգլերեն (գրավոր) 21.08.2012		5 տարի
03200	Նոտագրական գրագիտություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Անգլերեն (գրավոր) 21.08.2012		5 տարի
03400	Ռուսաց լեզու և գրականություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Ռուսաց լեզու. և գրակ. (գրավոր) 21.08.2012		5 տարի
05100	Սոցիալական աշխատանք և մեթոդիկա (տարրական կրթության)	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Սոցիոլոգիա (գրավոր) 17.08.2012		5 տարի
08100	Տնտեսագիտության տեսություն	Հայոց լեզու. և գրակ. (գրավոր) 13.08.2012	Սոցիոլոգիա (գրավոր) 17.08.2012	Անգլերեն (գրավոր) 21.08.2012	5 տարի

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Դիմում (ըստ ձևի)
2. Ատեստատ
3. Չորս լուսանկար (3x4 չափսի)
4. Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճեն և կացության վկայական)
5. ՄՊՔ Ա+Բ տարբերակի արդյունքների վկայագիր (առկայության դեպքում)
6. Փաստաթղթերի ընդունման վարձավճար՝ 5.000 դրամի չափով:

Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 16-ից մինչև օգոստոսի 11-ը՝ ամեն օր (բացի կիրակի օրերից)՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը:

2. *Մագիստրատուրա՝ հետևյալ մասնագիտություններով (առկա և հեռակա)՝*

№	Մասնագիտություն	Ուսման ժամկետը և ձևը
1	Բրդավաճառություն	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
2	Պատմություն	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
3	Հայոց լեզու	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
4	Հայ գրականություն	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
5	Անգլերեն լեզու	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
6	Նեղագիտական գրագիտ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
7	Ռուսաց լեզու	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
8	Ռուս գրականություն	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
9	Մեթոդաբանություն և հասարակական տեսություններ	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
10	Տնտեսագիտական հասկացություններ	2 տարի – առկա 3 տարի – հեռակա
11	Կառավարում	2 տարի – առկա 3 տարի – հեռակա

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Դիմում բուհի ռեկտորի անունով
2. Բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) բնագրերն ու պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին)
3. Ինքնակենսագրություն
4. 4 լուսանկար (3x4 չափսի)
5. Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի պատճեն)
6. Հրատարակված գիտական աշխատությունների ցուցակ (առկայության դեպքում)
7. Փաստաթղթերի ընդունման վարձավճար՝ 5.000 դրամի չափով:

Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 16-ից մինչև օգոստոսի 11-ը՝ ամեն օր (բացի կիրակի օրերից)՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը:

Այլ մասնագիտությամբ մագիստրատուրա ընդունվելու համար պետք է հանձնել ընդունելության քննություն, որը կանցկացվի օգոստոսի 23-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Մեսրոպ Մաշտոց Համալսարան:

Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Գ. Նժդեհի փող., 84 ա
ֆաքս՝ +374 47 95 00 23
հեռ.՝ +374 47 95 10 62
էլ. փոստ՝ m.mashtots@mail.ru
կայք՝ www.mashtots.nk.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2012-2013 ՈՒՍՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանն իր դռները բացել է դիմորդների առաջ:

Դիմորդների փաստաթղթերի ընդունումն սկսվել է հունիսի 1-ից: Հեռակա բաժինների դիմորդների փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետը հոկտեմբերի 20-ն է:

Առկա բաժիններում դիմորդների ընդունելությունը կատարվում է միասնական քննությունների արդյունքներով: Բուհերում ընդունելության գործընթացը վերահսկում և մրցույթի արդյունքները հաստատում է հանրապետական ընդունող հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված է նաև «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտորը:

«Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» քննությունը անցկացվում է համալսարանում:

Հեռակա բաժիններում սովորել ցանկացող դիմորդների ընդունելության քննությունները կազմակերպում և անցկացնում է «Գրիգոր Նարեկացի» համալսարանը:

Համալսարանը մասնագետներ է պատրաստում և որակավորումներ շնորհում հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա (առկա և հեռակա)
2. Հայոց լեզու և գրականություն (առկա և հեռակա)
3. Ռուսաց լեզու և գրականություն (առկա և հեռակա)
4. Օտար լեզու (անգլերեն) (առկա)
5. Իրավագիտություն (առկա և հեռակա)
6. Տնտեսագիտության տեսություն (առկա և հեռակա)
7. Պատմություն (առկա և հեռակա)
8. Նախազորակոչային պատրաստություն և ֆիզկուլտուրա (առկա և հեռակա)

Ուսման տևողությունն է.
- առկա ուսուցմամբ՝ 4 տարի,
- հեռակա ուսուցմամբ՝ 5 տարի:

Բուհի շրջանավարտներին տրվում է Հայաստանի Հանրապետության պետական նմուշի դիպլոմ:

Պետական և ոչ պետական միջնակարգ ուսումնական հաստատությունները գերազանցությամբ ավարտածները, ըստ ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգի, բուհի երկրորդ կամ երրորդ կուրս կընդունվեն: Երկրորդ մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողներն առարկայական տարբերությունները հանձնելուց հետո հրամանագրվում են երկրորդ կուրսում:

Համալսարանն ունի պետական կարգավիճակ, ուսանողներն օգտվում են պետական բուհերի համար նախատեսված բոլոր արտոնություններից, ուսման վճարն ավելի մատչելի է (35-40%-ով ցածր), քան մյուս համապատասխան հաստատություններում: Համալսարանը ուսումնական գործունեություն է ծավալում Ժամանակակից առաջնակարգ ԲՈՒՀ-երին ներկայացվող բարձր պահանջներին համապատասխան:

Համալսարանի և քոլեջի առկա բաժիններում սովորող զոհված զինծառայողների այրիների և երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, 1-ին և 2-րդ խմբերի և մանկուց հաշմանդամների և Արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդամների երեխաների ուսման վարձավճարը փոխհատուցվում է ԼՂՀ պետական բյուջեով նախատեսված գումարներից:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի, ինչպես նաև այլ բուհերի բակալավրի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և մագիստրոսի որակավորում ստանալու նպատակով կարող են իրենց կրթությունը շարունակել համալսարանի մագիստրատուրայում:

Ուսման տևողությունն է.
- առկա ուսուցմամբ՝ 2 տարի,
- հեռակա ուսուցմամբ՝ 3 տարի:

Ուսուցումը կազմակերպվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա
2. Հայոց լեզու և գրականություն
3. Պատմություն
4. Իրավագիտություն
5. Տնտեսագիտության տեսություն

Նրանք, ովքեր ցանկանում են երկրորդ մասնագիտություն ստանալ մագիստրատուրայում, հանձնում են ընտրած նոր մասնագիտությունից համապատասխան ընդունելության քննություններ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՈԼԵՋ

Ընդունելությունը կատարվում է առանց քննությունների, մրցութային կարգով: Համալսարանի քոլեջ կարող են ընդունվել 9-րդ (նախկին 8-րդ) դասարանի շրջանավարտները: Փաստաթղթերն ընդունվում են մինչև օգոստոսի 31-ը:

Քոլեջը մասնագետներ է պատրաստում և որակավորումներ շնորհում հետևյալ մասնագիտությունների գծով՝ առկա ուսուցման հետևյալ տևողությամբ.

1. Թարգմանություն և գործավարություն-թարգմանիչ և գործավար (4 տարի):
2. Հայոց լեզվի դասավանդում - հայոց լեզվի ուսուցիչ (4 տարի):
3. Ռուսաց լեզվի դասավանդում - ռուսաց լեզվի ուսուցիչ (4 տարի):
4. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ - ֆիզկուլտուրայի ուսուցիչ, սպորտի մասնագետ (4 տարի):
5. Դասավանդում տարրական դասարաններում - տարրական դասարանի ուսուցիչ (4 տարի):
6. Նախադպրոցական կրթություն - մանկապարտեզի դաստիարակ (3 տարի):
7. Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ - տնտեսագետ, հաշվապահ (3 տարի):
8. Մենեջմենթ (կառավարում) - տնտեսագետ-մենեջեր (3 տարի):
9. Ֆինանսներ - տնտեսագետ-ֆինանսիստ (3 տարի):
10. Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում - տեխնիկ (4 տարի):
11. Ատամնատեխնիկական գործ (հիմնական կրթության հիմքով) - ատամնատեխնիկ (3 տարի):
12. Ատամնատեխնիկական գործ (միջնակարգ կրթությամբ) - ատամնատեխնիկ (2 տարի):
13. Զբոսաշրջություն - զբոսաշրջության ծառայությունների մասնագետ (3 տարի 6 ամիս):

Քոլեջի շրջանավարտները ցանկության դեպքում կարող են իրենց կրթությունը շարունակել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի (համապատասխան մասնագիտությունների գծով) 2-րդ և 3-րդ կուրսերից:

Պահանջվող փաստաթղթերը՝ դիմում, կրթության մասին փաստաթղթի բնագիրը, վեց լուսանկար (3X4 չափսի), անձը հաստատող փաստաթուղթ:

Համալսարանի դռները բաց են բոլոր նրանց առաջ, ովքեր ուզում են սովորել և ստանալ հարուստ գիտելիքներ, ձեռք բերել բարձրագույն կրթություն:

Առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք համալսարան կամ զանգահարեք 94-18-59, 94-14-29 հեռախոսահամարներով:

ՌԵԿՏՈՐԱՏ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ Գնահատման և թեստավորման կենտրոնը ս. թ. հունիսի 24-ից սկսում է հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) 2011-2012 ուստարվա և նախորդ տարիների շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Ռուսաց լեզու», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաների պետական ավարտական և միասնական (պետական ավարտական և բուհերի ընդունելության) լրացուցիչ քննությունների կազմակերպման գործընթացը:

Պետական ավարտական լրացուցիչ քննություններին կարող են մասնակցել՝

- հիմնական փուլում անցկացված քննություններին չմասնակցած շրջանավարտները,
- միասնական քննության ավարտական մասը (Ա մակարդակ) չհաղթահարած շրջանավարտները,
- պետական ավարտական քննություններից (2 առարկայից ոչ ավելի) անբավարար ստացած շրջանավարտները:

Այն շրջանավարտները, որոնք չեն հայտագրվել պետական ավարտական քննություններին, իրենց դպրոցներում պետք է ներկայացնեն դիմում տնօրենի անունով:

Պետական ավարտական քննություններից անբավարար ստացած կամ միասնական քննության ավարտական մասը (Ա մակարդակ) չհաղթահարած շրջանավարտները պետական ավարտական քննություններին (վերաքննություններին) մասնակցելու համար նոր դիմում չեն լրացնում:

Վերաքննություն հանձնողների տվյալները ներկայացնում են կրթության բաժինները:

Միասնական լրացուցիչ քննությանը (2012թ. բուհերի ընդունելության) կարող են մասնակցել՝

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2012թ. զորացրվածները,
- սփյուռքի շրջանավարտները, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության 2012թ. շրջանավարտները,
- 2011-2012 ուստարվա այն շրջանավարտները, որոնք միասնական քննությանը հարգելի պատճառով ի վիճակի չեն եղել մասնակցելու,
- այն շրջանավարտները, որոնք առաջին փուլի քննություններին մասնակցելու համար չեն հայտագրվել,
- բողոքարկման հանձնաժողովի կողմից միասնական լրացուցիչ քննությանը մասնակցելու թույլտվություն ստացած շրջանավարտները:

Միասնական լրացուցիչ քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- լրացնել դիմում-հայտ,
- «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին,
- անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- 3X4 չափսի լուսանկար:

Միասնական քննությունների վճարից (1500 դրամ) ազատվում են՝

- 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Դիմում-հայտերը լրացվում և ընդունվում են Գնահատման և թեստավորման կենտրոնում, հունիսի 24-ից՝ ամեն օր՝ ժամը 10:00-17:30-ը:

Հասցեն՝ ք.Ստեփանակերտ, Թումանյան 63:

Ընդունման ժամկետն ավարտվում է հունիսի 29-ին՝ ժամը 18:00-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 97 40 51 հեռախոսահամարով:

Գնահատման եվ թեստավորման կենտրոն

ՀԱՋՈՂ ՔՆՆԱՇՐՋԱՆ



Ավարտվեց 2011-2012 ուսումնական տարվա քննաշրջանի հիմնական փուլը: Առջևում լրացուցիչ քննություններն են: Արդյունքների վերլուծությունը կներկայացնենք առաջիկա համարներում: Պարզ է մի բան՝ բոլոր առարկաների գծով գրանցվել է առաջընթաց նախորդ՝ 2010թ. քննաշրջանի համեմատությամբ:

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝ ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3205: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 25.06.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: